



ՅԻՍՈՒՏԻՒԻ
ՅԱԿԱՏԱՑՐՈՒՄ
ԿԸ ՇԱՏԼԱՎ

(ՈՒՍՈՒՑՉԻ ՈՒՂԵՑՈՅՑ, Ա. ՄԱՍ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներածական	7
Դաս 1 – Յիսուսի Դամբարձումը	17
Դաս 2 – Հոգեգալուստ	20
Դաս 3 – Իմ անունովս հաւաքուիլ	24
Դաս 4 – Եկեղեցին կը տարածէ Յիսուսի Աւետարանը	27
Դաս 5 – Պիտի յայտարարենք ամէն տեղ	31
Դաս 6 – Ստեփանոս՝ առաջին սարկաւագը	34
Դաս 7 – Սուրբ Ստեփանոս՝ առաջին նահատակը	37
Դաս 8 – Առաջնորդել՝ ծառայելով	40
Դաս 9 – Նորակազմ Եկեղեցւոյ անդամները միասին կ'աղօթեն	43
Դաս 10 – Նորակազմ Եկեղեցւոյ անդամները իրարու հոգ կը տանին	46
Դաս 11 – Անոնք միասին աղօթեցին	49
Դաս 12 – Տարբեր ենք՝ բայց Տիրոջնով միացած	52
Դաս 13 – Սամարացիներուն եւ Եթովպիացի բարձրաստիճան պաշտօնեային դարձը	55
Դաս 14 – Պողոս առաքեալի դարձը	58
Դաս 15 – Կոռնելիոս՝ առաջին հեթանոսը որ քրիստոնեայ դարձաւ	61
Դաս 16 – Քեթանոսներուն մկրտութիւնը կը բացատրուի	65
Դաս 17 – Քրեշտակներ եւ հրեշտակապետներ	68
Դաս 18 – Յիսուսի պահք	71
Աղօթքներ՝ 10 տարեկան պատանիներու համար	75

ՆԵՐԱԾԱԿԱՆ

ՔԱՆԻ ՄԸ ԽՈՍՔ ԴԱՍԸՆԹԱՑՔԻ ՄԵԹՈՏԻՆ ՄԱՍԻՆ

Այս դասընթացքը Քրիստոսակեդրոն եւ աշակերտին վրայ ուշադրութիւն դարձնող ծրագիր մըն է, որուն միջոցաւ ան պիտի ծանօթամայ ճարդկութեան հանդեպ Աստուծոյ ունեցած անսահման սիրոյն: Սոյն ծրագիրը նպատակ ունի, Աստուածաշնչական հիմնական դասերով, եկեղեցական աւանդութիւնները կեանքի կոչել նոր սերունդին մօտ:

Աստուած «տարբեր կերպերով խօսած էր» (Եբր. 1:1): Անցեալին Ան ինքիմք յայտնած էր մարդոց: Ան առաջնորդած էր զանոնք ծշմարտութեան: Աստուծոյ յայտնութիւնը շարունակուող իրականութիւն է: Ուղղափառ եկեղեցիներուն համար, Աստուծոյ յայտնութիւնը իբրեւ այդպիսին, կը կոչուի Սուրբ Աւանդութիւն, որ ամբողջութիւնն է դարերու ընթացքին Եկեղեցւոյ ապրած կենդանի վկայութեան: Անիկա արտայայտութիւն կը գտնէ Աստուածաշումչին, ծեսին, խորհրդակատարութեանց, Յայրերու սրբազն գրութեանց, սուրբերու վկայաբանութիւններուն, պահեցողութեան եւ տօներուն, ինչպէս նաև Եկեղեցական երաժշտութեան ու արուեստի ծամբով: Իրաքանչիւր դասի Աստուածաշնչական նիւթին առնչելով Սուրբ Աւանդութիւնը, կը յուսանք պատանիները առաջնորդել հաւատքի փորձառութեան, Ուղղափառ Եկեղեցւոյ հաւատքին, որուն ծամբով անոնք պիտի մտերմանան մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի հետ:

Աւելին, սոյն ծրագիրը մասնաւոր ճիգ կը կատարէ հաւատարիմ մնալու կրօնական դաստիարակութեան սկզբունքներուն, ինչպէս նաև կրորութեան չափանիշներուն առհասարակ, եւ կ'առաջնորդուի հաւատքի աճման սկզբունքներով: Մեր օրինակը առած ենք Սեծ Ուսուցչի՝ Յիսուսի ուսուցման մեթոտն:

Յիսուս իր հետեւորդները մղեց որ իրենք յայտնաբերեն ծշմարտութիւնը: Ան պատմութիւններ եւ առակներ պատմեց, որոնք առնչուած էին զինք ունկընդրողներուն կեանքի փորձառութիւններուն: Իր օգտագործած պատմուածքները առիթ հանդիսացան, որ իր ունկնիրները ապրին այդ պատմուածքները: Սովորական ծանօթութիւն տալէ անկախ, Յիսուս մղեց իր հետեւորդները որ փորձառութեան ծամբով բան մը սորվին: Դաստիարակչական սահմանումէն տարբեր, այս մօտեցումը մենք կը կոչենք փորձառական մօտեցում:

Յիսուս նաև հարցադրումներ կատարեց, որպէսզի մարդիկ մտածեն այդ մասին եւ իրենք գտնեն

անոնց պատասխանները: Իր հետեւորդներուն զարգացման տարբեր մակարդակները նկատի ունենալով, ինչպէս նաև անոնց ընկալելու տրամադրութեանց տարբերութիւնները հաշուի առնելով, Ան չբացատրեց իր պատմածներուն իմաստը, բացի տասներկութեն, զոր ընտրած էր: Ան գիտէր, որ ժամանակ մը ետք իր խօսքերը պտուղ պիտի տային անոնց սրտերուն մէջ, եւ անոնք պիտի սկսէին հասկնալ: Յիսուս համբերութեամբ ու սիրով վարուեցաւ բոլորին հետ, ընդունելով զանոնք այնպէս ինչպէս որ էին այդ միջոցին: Լաւապէ գիտնալով որ հոգեւոր զարգացումը ամբողջ կեանքի տեսողութեան վրայ տարածուած իրողութիւն է, Յիսուս համբերութեամբ եւ անպայմանական ծեւով կը սպասէ մեզմէ իրաքանչիւրէն, որ հոգեպէս ածինք ու կազմաւորուինք:

ԴԱՍԱԽԱՂԱՎԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Սեր ընդիհանուր ծրագիրը կազմուած է 6-17 տարեկաններու համար, երկու գիրքերով 36 դասեր տալով ամբողջ տարեշշոջանի ընթացքին: Ընդիհանրապէս ուսուցչի ուղեցոյցը 36 դասերը միասնաբար կը պարունակէ:

Դասերուն նիւթը քաղուած է Յին թէ Նոր Կտակարաններէն: Իրաքանչիւր դաս կը սկսի մտածումի առաջնորդող աշխատանքով մը, որ աշակերտներուն կ'օգնէ իրենց կեանքին մասին մտածելու, ճիշդ հասկընալու համար ներկայացուած Աստուածաշնչական պատմութիւնը:

Աստուածաշնչական պատմուածքին մեթոտը այն է, որ յարմարցուած ըլլայ տուեալ տարիքին, որուն կը հետեւին դարձեալ այդ տարիքին յարմար վերաքաղներ եւ այլ աշխատանքներ: Աստուածաշնչական պատմուածքները իրաքանչիւր տարուան համար նիւթ մը կը շօշափեն, որ տուեալ տարիքին յարմարութեամբ դասաւորուած են, եւ կը ներառեն Եկեղեցւոյ Սուրբ Աւանդութիւնը, որ գլխաւոր նպատակն է այս ծրագրին: Այսպիսով բոլորին համադրումը աշակերտին դիմաց դիւրացուած է:

10 տարեկան մասնուկներու աճման տարիքը նըկատի ունենալով, ինչպէս նաև ժամանակի եւ միջոցի անոնց ըմբռնողութիւնը, պատմութիւնը գնահատելու կարողութիւնները, վայր, թուական, մարդիկ եւ դէպքեր ճանչնալու մօտեցումը, այս տարուան ծրագիրը կեղրոնացած է առաջին դարու Եկեղեցւոյ աճման վրայ: Գործ Առաքելոց գիրքին վրայ իիմնուելով, աշակերտ-

ներուն կը ծանօթացուին Սուլր Յոգիին գործերը, երբ քրիստոնեական Եկեղեցին նոր կը սկսէր իր կեանքը, Յիսուսի համբարձումն ետք:

Այս դասընթացքին առաջին 18 դասերը թեմա-թիվ մասերու բաժնուած են:

Ա. Մաս – Եկեղեցին Յիսուս Քրիստոսի ներկայութիւնն է

Յարուցեալ Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս Երկրի վրայ մնաց քառասուն օրեր, եւ բազմաթիւ անգամներ իր աշակերտներուն երեւցաւ: Աս Երկինք համբարձաւ իր տասմերկու առաքեալներուն եւ աշակերտներուն ներկայութեան: Իր խոստումին համաձայն, Ան Սուլր Յոգին դրկեց որպեսզի զօրացնէ եւ առաջնորդէ Եկեղեցին, իր հետեւրուներուն խումբը: Յիսուսի խօսքերուն հաւատարին, Եկեղեցին միշտ կը հաւաքրուի Սուլր Պատարագ մատուցելու, որուն ճամբռվ Յիսուսի ներկայութիւնը կը զգանք: Եկեղեցին, իրեւ խորհրդական ներկայութիւնը Քրիստոսի այս աշխարհին վրայ, Անոր գործը կը շարունակէ, աւետարանելով բարի լուրը Աստուծոյ թագաւորութեան:

Բ. Մաս – Պետք է Վկայենք

Առաջին դարու Քրիստոնեական Եկեղեցւոյ հետեւլով, մենք կրնանք Վկայել Յիսուս Քրիստոսի մասին, զանազան կերպերով: Առաքեալները իրենք Վկայեցին, Բարի Լուրը հրչակելով զանազան երկիրներու մէջ: Անոնք նաև Վկայեցին իրենց կատարած աշխատանքով եւ բժշկութիւններով, ինչպէս նաև իրարու կարիքները հրգալով: Ստեփանոս Եղայ առաջին նահատակը որ Յիսուսի մասին վկայեց՝ իր կեանքը տալով: Առաքեալները շարունակեցին իրենց Վկայութիւնը, նորակազմ Եկեղեցին առաջնորդելով եւ ուղղութիւն տալով անոր:

Գ. Մաս – Քրիստոնեաներուն առօրեայ կեանքը

Եկեղեցին իր աղօթի կեանքին սկսաւ Յիսուսի համբարձումն ետք: Առաքեալները վերնատան մէջ Սուլր Յոգին ստացան զոր Յիսուս խոստացած էր, միասնաբար Ս. Կոյս Մարիամ Աստուծածնի հետ, երբ հաւաքրուած էին աղօթելու:

Նորակազմ Եկեղեցին աճեցաւ ու զօրացաւ քովքովի գալով աղօթելու եւ ծաշակումի համար: Նոր Եկեղեցւոյ անդամները իրարու կարիքները կը հրգային, կետեղու անդամները կարիքները կը հրգային, կետեղու անդամները կարիքները կը հրգային:

Յակառակ անոր որ տարբեր ենթահողերու ծընունդ էին, սակայն անոնք բոլորը Քրիստոսով միացած էին: Սուլր Պատարագը կնիքն էր այդ այլազանութիւնը միացնող:

Դ. Մաս – Վկայենք ամէնուն

Առաքեալները եւ անոնց հետեւրդները հաւատարին մնացին Յիսուսի ուսուցումներուն՝ Երթալու եւ բոլոր ազգերը աշակերտ դարձնելու: Անոնք Աւետարանը քարոզեցին իրեաներուն եւ հեթանոսներուն, կեանք տարբեր հանգամանքներու վրայ եղող մարդոց՝ հարուստին թէ աղքատին, ազատին եւ ոչ ազատին, ընկերութեան կեանքեն մերժուածին թէ լքուածին:

Ե. Մաս – Եկեղեցին կը տօնէ

Հրեշտակներուն եւ իրեշտակապետներուն տօնը, ինչպէս նաև Ս. Ծննդեան Յիսուսի պահքը այստեղ ներկայացուած են, որպէսզի աշակերտներուն գիտութիւնը առաւել եւս զարգանայ Եկեղեցւոյ առաջին շրջանի կեանքին նասին:

ԻՆՉՊԻ՛Ս ՐԱՍԿԱՆԱԼ ԱՇԱԿԵՐՏՈՒԹԵՐԸ ԵՒ ԲԱՆՉԱՆԱԼ ԱՆՈՒՑ ԻՒՐԱՅԱՏՈՒԿ ՆԿԱՐԱԳՐԱՅԻՆ ԳԻԾԵՐԸ

Աստուծոյ հետ ըլլալու ջանասիրութիւնը, իւրաքանչիւր մարդ էակի ուղղուած կոչ մըն է: Այդ ճամբռուն մէջ կը մտնէ մարդ իր ծնունդով եւ կը շարունակէ իր ընթացքը մինչեւ մահ: Իւրաքանչիւր մարդու հաւատքի կեանքը իւրայատուկ ըլլալով հանդերձ, հասարակաց գետին մը ունի համայն մարդկութեան հետ: Անձի մը կեանքին մէջ կրնան մարդիկ եւ դէպքեր ըլլալ, որոնք անոր հաւատքին աճման կը նպաստեն: Իրեւ կրօնքի ուսուցիչ, կոչուած ես քու աշակերտներդ առաջնորդել քրիստոնեական հաւատքի աճման ընթացքին մէջ: Գիտնալը թէ աշակերտներդ ինչպէս կ'ածին հրգեւուրապէս, իմացապէս, ընկերայնորէն եւ զգացականորէն, քեզի պիտի օգնէ յարմար ծրագիրներ կազմելու եւ ծեռարկներ կազմակերպելու, խորացնելու համար անոնց հաւատքը:

10 ՏԱՐԵԿԱՆՆԵՐՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Այս նիւթերը քաղուած են հրգեաններ՝ ժամանակակի, Ֆիաժի, Յաւըրտ Կարտնըրի, Լորընս Քոհըլազրի, Երիք Երիքսընի եւ ճեյս Ֆլաւըրի բարոյագիտական, հրգեանական եւ հաւատքի աճման վերաբերող շարք մը գործերէն:

10 եւ 11 տարեկաններուն նկարագրային կազմաւորումը շատ նման է իրարու: Այս հատուածին մէջ երկուրն ալ պիտի ներկայացուին, նշելով նաև անոնց ունեցած տարբերութիւնները:

Զեր 10 տարեկան աշակերտները բաւական ճամբար կտրած են իրենց կանուխ մանկութենէն ի վեր: Իբրև մանուկներ եւ կանուխ շրջանի պատամիներ, անոնց կրօնական փորձառութիւնը ազդուած կ'ըլլայ իրենց ապրած շրջապատէն, ուրկէ իրենց հաւատքի հունտերը կը քաղէն: Պատկերներ, ձայներ, շարժումներ եւ եկեղեցական զանազան արտայայտչամիջոցներ ճաշակ մը կու տան իրենց, Եկեղեցւոյ՝ Աստուծոյ ժողովուրդի կեանքին նախն:

Իբրև մանուկներ դպրոց երթալու պատրաստը-ւած ըլլալով 5 տարեկանին, անոնց աճումը կը շարունակուի իրենց ծնողները կապէլով, ինչպէս նաև Եկեղեցւոյ անդամներէն ունանց ըրածները ընդորինակելով: Ֆիշդ այս ժամանակաշրջանին, Եկեղեցւոյ անդամներուն գործածած բառերը, արտայայտած մտածումները մեծագոյն դասերն են, որոնցմէ կ'ազդուի իրենց մանկական հաւատքը:

Դպրոցական կեանքի առաջին տարիներուն, մանուկները կը սկսին իրենց գիտութեան աճումը զգալ: Արագ աճման այս տարիներուն, 10 տարեկանները ուրիշներու հետ փոխ յարաբերութեան մէջ կը մտնեն, եւ անձնակեդրունութենէ կ'անցնին ուրիշներու իրաւունքներուն ժանաշման աստիճանին: Այս տարիքին գործնապէս մասնակցութիւնը, սորվելու նոր առիթներ կը ստեղծէ, յատկապէս խմբային աշխատանքներու ժամբով: Այս ծեւով աւելի պիտի հասկնան Եկեղեցւոյ հաւատքի պատմութիւնները:

10 տարեկանները փաստորէն աւելի մեծ են քան ուրե կամ իմնը տարեկանները: Սեռային տարբերութիւնները, յատկապէս աղջիկներու պարագային, ակընյայտ կը դառնան: Այս տարիքին մէջ գտնուող կարգ մը պատամիներ շատ արագ աճման նշաններ ցոյց կու տան, մինչ ուրիշներ աւելի դանդաղ աճ կ'ունենան:

Տան եւ ընտանիքի անդամներուն կողմէ ցոյց տրուած հետաքրքրութիւնը, մանաւանդ ընկերներուն հետ անոնց բարեկամութիւնը, առիթ կ'ընծայէ մեզի զանոնք աւելի ներառնելու Եկեղեցւոյ կեանքին ներս:

10 ՏԱՐԵԿԱՆՆԵՐՈՒՄ ՅԱՏԿԱՆԾԱԿԱՆ ԳԻԾԵՐԸ

Ֆիզիքապէս, տասը տարեկան պատամինները տակաւին կը շարունակեն աճիլ, հասնելու համար միջին մանկութեան տարիքի: Անցումային այս շրջանը երբեմն կը տարբերի երեխաներուն մօտ: Ոճանք, մանաւանդ աղջիկները, արբունքի առաջին նշանները ցոյց կու տան: Անենքն ալ իրենց ֆիզիքական աշխատանքներուն վրայ աւելի ուշադիր կ'ըլլան:

Տասը տարեկանները խանդրով ու եռամդրով լե-

ցուն կ'ըլլան: Անոնք կեանքը կը վայելեն, սորվելու ախորժակ կ'ունենան ու կը վայելեն իրենց ընկերները: Անոնք շատ ինքնավստահ կ'ըլլան եւ կը սիրեն մեծերու հետ զրուցել: Անոնք մեզի կը դիմեն Աստուծոյ մասին իրենց տարբեր փորձառութիւններով, ինչպէս նաև իրենց հաւատքին ու Եկեղեցւոյ առնչուող հարցումներով: Այդ ենթահողին վրայ մենք կրնանք աշխատիլ, աւելի լաւ ժանաչում տալով իրենց Եկեղեցւոյ մասին, յատկապէս գիրենք ներառնելով մարդոց շրջանակին մէջ:

Երբ մտածենք մեր տաս տարեկաններուն մասին, պէտք է յիշենք, որ մեր Տերն ալ այդ տարիքի պատամի մը եղաւ: Նոյն փորձառութիւնները Ան ալ ապրեցաւ, ինչպէս կը դաւանինք Նիկիական Հանգանակին մէջ: Ասիկա նկատի ունենալով, մենք պէտք է իրաքանչիւր մանուկի մէջ Յիսուսի կերպարը տեսնենք: Սուրբ Կոյս Մարիամի նման, որ Յիսուսի առաջին ուսուցչուին էր, մենք ալ կոչուած ենք օգնելու այս տասը տարեկաններուն առողջ զարգացումին:

ՃԱԾՆԱՅՈՒ ԿԱՐՈՌՈՒԹԵԱՆ ՊԱՐՊԱՏՈՎՈ

Տասը տարեկանները տակաւին յստակ տուեալներու վրայ կը սորվին: Անոնք յստակ կը մտածեն ու կը սորվին, յստակ պատկերներով, բայց իրականն ու երեւակայականը կրնան զատորոշել իրարմէ: Ութ եւ ինն տարեկաններուն հետ բաղդատած, անոնք հետզհետէ գործնական փորձառութիւններն կ'անցնին յստակ ընթրումներու: Պէտք է միշտ նկատի ունենանք, թէ հակառակ անոր որ անոնք կ'աճին, սակայն տակաւին յըստակ կը մտածեն:

Այս տարիքին, խմբային պատմութիւններ, յըստակ պատկերներով, լաւագոյն կերպն է ուսուցանելու: Իմաստը տակաւին պահուած կը մնայ պատմութեան մէջ: Թելաղրեցէք որ խօսին պատմութեան մասին, իրենց հասկցած ծեւով: Կրնաք անոնց հարցնել թէ հիմա հ՞նչ կը պատահի, ո՞վ է իրենց նախընտրած հերոսը, եւ հ՞նչ աղդեցութիւն կ'ունենայ իրենց վրայ տուեալ պատմութիւնը: Հիմա որ անոնք անցեալ, ներկայ ու ապագայ ժամանակներուն տարբերութիւնները կը ճանչնան, զիրենք մղեցէք պարտականութիւններ կատարելու՝ ժամանակագրական կարգը ծշելու պատմութեան մէջ կատարուող դէպքերուն: Ասիկա իրենց մէջ պիտի զարգացնէ պատմութեան ընթացքին նկատմանք գիտակցութիւնը: Այս հանգրուանին անոնք կը սորվին պատմութիւնը եւ կը փորձեն վերարտադրել զայն: Աւելի ուշ, երբ մեծնան, իրենք զիրենք պիտի երեւակայեն իբրև մաս այդ պատմութեան, եւ ի վերջոյ պիտի կարողանան միջամտել պատմութեան դէպքուն, իրենց կարծիքը տալով:

Տասը տարեկանները հաճոյք կ'առնեն ծանօթութիւններէ, ինչպէս՝ ժամանակ, վայր, մարդիկ, օրէնքներ եւ կանոններ: Անոնք կը սիրեն գիտնալ թէ ինչպէ՞ս կազմակերպուած են դէպքերը: Անոնց մէջ հետզհետէ կ'աճի պարզ պատճառ մը եւ անոր ազդեցութիւնը փոխսյարաբերութեան վրայ:

Ընկերային զարգացում

Տասը տարեկան փոքրիկները արդէն բաւական վարժութիւն ծեռք ձգած կ'ըլլան դպրոցական կեանքէն ներս, ինչպէս նաև ընկերային շրջապատին մէջ ապրելու համար: Վստահարար իրենց ունեցած փորձառութիւնները բաւարար եղած կ'ըլլան իրենց մէջ մըրցակցութեան ոգին զարգացնելու իմաստով:

Զգացականօրէն անոնք աւելի կայուն են եւ կըրնան իրենց զգացումներուն վրայ իշխել: Շատ ազնիւ անհատականութիւն կ'ունենան: Անոնք կը ծեւացնեն թէ հաճոյք կ'առնեն մրցակցութենէ, պատասխանատրութեան գիտակցութիւն կը ցուցաբերեն, եւ գործակցութեան ոգի կ'արտայայտեն:

Շատ կարեւոր է որ տասը տարեկանները խումբի մը անդամ ըլլան: Այս տարիքին անոնք շատ հաճոյք կ'առնեն խումբի մը մէջ ըլլալէ, ինչպէս մարզական, արուեստի կամ այլ խումբեր: Անոնք հաճոյք կ'առնեն խմբային աշխատանքներէ, ինչպէս նաև «մտերին ընկերներ» ունենալէ: Հակառակ անոր որ անոնք այդ խումբին ազդեցութեան տակ կ'ըլլան, յատկապէս ծրուղներու եւ ուսուցիչներու միջոցաւ, սակայն դարձեալ կարեւոր է խումբի մը իրենց անդամակցութիւնը:

Տասը տարեկաններուն հոգե-ընկերային նկարագիրը կերտելու համար, պէտք է զանոնք ներառել Եկեղեցւոյ կեանքէն ներս: Մասնակից դարձուցէք զանոնք աղքատներուն օգնելու Եկեղեցւոյ առաքելութեան, եւ քաջալերեցէք որ Եկեղեցւոյ մէջ շապիկ հագնին ու դպրութիւն կատարեն:

Բարոյական զարգացում

Տասը տարեկաններուն համար շատ կարեւոր են կարգն ու կանոնը: Անոնք կրնան հնազանդիլ օրէնքներու զոր կը սորվին եւ կը սիրեն: Անոնք կրնան նկատի առնել հաւաքական կեանքի օրէնքները, եւ զգալ ուրիշներու վիճակը:

Ուրիշներու կողմէ տրուած վաւերացումը շատ կարեւոր է տասը տարեկանի մը առնելիք որոշումին մէջ: Խումբի մը անդամ ըլլալու իրենց կարիքը պատճառ կը դառնայ որ այդ խումբին օրէնքներուն եւ ճիշդ կամ սխալ դատաք ընտրութիւններուն հետեւի ան:

Անոնց զարգացող գիտակցութիւնը կրնայ զա-

նազանել ճիշդը սխալէն: Սակայն, միշտ ալ ճիշդը չեն ընտրեր: Անոնք պէտք ունին խիստ ուղղութեան, իրենց ծնողքն կամ ուսուցիչներէն:

Դաւատրի զարգացում

Դպրոցական տարիքի մանուկին հաւատքը արտայայտութիւն կը գտնէ իրապաշտ հայեացքով, որով ան կը նայի աշխարհին:

Այս տարիքի երեխան լաւ պատմութիւններ կըրնայ պատմել կամ վերապատմել, եւ իր հասկցած ծեւով թափանցել անոր խորքը: Երեխան տակաւին չի կրնար պատմութեան սահմաններէն դուրս ելլել եւ անդրադարձ մը կատարել անոր իմաստին: Այս տարիքին նակերեսային մօտեցում մը կ'ունենայ ան, եւ աւելի խորը չի թափանցեր: Աստուծոյ պատկերները խորհրդանշական են տակաւին եւ բնութեան մէջ կը գտնուին: Աստուծոյ զօրութեան ու փառքին խորհրդանշանները մարդկային պատկերներով կը ներկայանար իր մտքին: Տասը տարեկանները աստուածաբանական ըմբռնողութիւն չեն ունենար տակաւին:

Զարգացման այս հանգրուամին, երեխան կը սկսի պատկերացնել թէ ի՞նչը իրականութեան համազօր է, եւ ի՞նչը՝ երեւակայական, որ հաւատք կը ստեղծէ իր մասին: Փոխ-յարաբերական իմաստով, երեխան իր սեփական կարծիքն բացի ուրիշներու կարծիքն ալ կը հարցնէ: Պատմութիւն պատմելու վարժութիւնը իրենց մէջ կը զարգացնէ այն զգացումը, թէ ո՞ւր է իրենց տեղը այն մէծ պատմութեան մէջ, որ փրկագործութիւն կը կոչուի:

Գիտնալով որ տասը տարեկանները այնքան լեցում կ'ըլլան սիրով եւ աշխատանք կատարելու հաճոցով, պէտք է օգտագործենք իրենց այս խանդը եւ զիրենք ներառնենք այնպիսի աշխատանքներու մէջ, որ կարենան արտայայտել իրենց զարգացող ինքնութիւնը, իբրեւ հետեւորդներ Յիսուս Քրիստոսի:

ԱՃԱԿԵՐՏՆԵՐԸ ԻՆՉՊԵՇ ԿԸ ՄՏԱԾԵՆ ՈՒ ԿԸ ՍՈՐՎԻՆ

Աշակերտներուն մտածելու եւ սորվելու կարողութիւնները գիտնալ՝ առիթ կու տայ ուսուցիչներուն ծրագրելու եւ օգտագործելու շարք մը կերպեր, որոնք կ'օգնեն իրաքանչիւր աշակերտին ընդլայնել իր ուսանելու կարողութիւնը: Ուսուցիչներ վաղուց գիտեն, թէ աշակերտները սորվելու տարրեր կերպեր ունին: Յարվըրտի փրոֆեսոր Յառւըրտ Կարտնըրը ուսուցիչներու այս փորձառական գիտութիւնը սահմանած է: Իր «Մտքի Շրջագիծը» գիրքին մէջ, հրատարակուած

1983-ին, Կարտնըրը սահմանում մը կ'առաջարկէ մարդոց սորվելու կարողութեան մասին, զոր կարելի է կոչել զանազան կարողութիւններ: Այս սահմանումին համաձայն, կարողութեան տարբեր մակարդակներ գոյութիւն ունին, սակայն իւրաքանչիւր անհատ տարբեր կարողութիւն կը ցուցաբեր մէկուն կամ միւսին մէշ: Որպէսզի կարելի ըլլայ բոլոր աշակերտները ներգրաւել, անհրաժեշտ է որ ուսուցիչները տարբեր նախածեռնութիւններու դիմեն, բոլոր մակարդակի աշակերտները մասնակից դարձնելու հաւաքական աշխատանքին:

Կարողութեան տարբեր մակարդակներ՝ որոնք սորվելու տարբեր աստիճաններ կը յայտնաբերեն.—

- Խօսակցական-Եզրուական.**— Բառեր գործածելու կարողութիւնը եւ լեզուն օգտագործելու շնորհը, թէ գրաւոր եւ թէ բանաւոր, այս կարողութեան իւրայատկութիւնը կը ներկայացնեն: Խօսակցական այս կարողութեամբ աշակերտները լաւագոյնս կը սորվին կարդալով, գրելով, պատութիւն լսելով կամ բարձրաձայն կարդալով եւ ցուցատրութեամբ: Անոնք զաղափարներ կը զարգացնեն, երբ խօսին անոնց մասին: Անոնք բազմաթիւ հաղումներ կը հարցնեն, ոչ թէ անուշադիր եղած ըլլալուն պատճառով, այլ աւելի բան սորվելու համար: Յաճախ անոնք շատախոս կ'ըլլան ու կը զգուեցնեն, սակայն մեզի կը պարտադրեն որ առիթ տանք իրենց խօսելու եւ այդ ճամբով սորվելու: Անոնք հաճոյք կ'առնեն այն պարտականութիւններեն, որոնք ընթերցում կու տան, պատմութիւն պատմել ունին, ցուցատրութիւն կամ բառախաղ ունին:
- Դիտելով-Ծկատելով.**— Դիտելով սորվողները կարիք ունին նայելու առարկաներուն եւ անոնք պատկերներու ճամբով մտածելու կարողութիւն ունին: Անոնց դիտելու կարողութիւնը գորաւոր ըլլալով, գոյներու, կերպերու, չափերու, տեղի եւ ծեփի բարձր զգացողութիւն ունին: Անոնք այս բոլոր տարրերուն փոխադարձ յարաբերութիւնները լաւ կը ճանչնան: Պատկերներու գործածութիւնը, արուեստի պարտականութիւնները, կերպարներն ու քարտեսները մեծապէս օգտակար կ'ըլլան անոնց սորվելու ընթացքին: Անոնք կը սիրեն պատկերացնել իրենց լսած պատմութիւնները, եւ երբեմն ալ կը նախընտրեն ընկերակցող երաժշտութիւն մը ունենալ:
- Տրամաբանական-Քուաբանական.**— Տրամաբանականօրէն սորվողները այս մակարդակը կարողութիւն կու տայ սորվողին մարդկային փոխ-յարաբերութիւնները լաւապէս սորվելու: Փոխ-յարաբերական սորվողները շատ լաւ դիտողներ կ'ըլլան, եւ լաւապէս կը կարդան մարմնի լեզուն եւ մարդկային ծայնի իւրայատկութիւնները: Անոնք կրնան ծանօթութիւն տալ, թէ մարդիկ ի՞նչ կը զգան, եւ ըստ այնձ կը պատասխանեն: Անոնք ընկերային ծեռնարկներէ հաճոյք կ'առնեն, ինչպէս նաեւ կը սիրեն աշխատիլ մէկու մը հետ կամ խմբային աշխատանքով:

- Տեր-անձնական-հայեցողական.**— Հայեցողական սորվողները օժտուած կ'ըլլան յատուկ զգայա-

հարցերը քննարկել եւ զստ այնմ լուծել: Անոնք հարցերը կը տեսնեն, եւ կարողութիւն ունին մէկը միւսէն զատորոշելով: Անոնք «կը զբաղին» հարցերով, եւ իրենց աշխատանքով աւելի բան կը սորվին, բան թէ տեսնելով կամ լսելով: Թատերական կերպը եւ ծեռային աշխատանքը իտեալ կերպն է այս տեսակի սորվողներուն համար:

- Ֆիզիքական-մարմնական.**— Ֆիզիքական սորվողներու համար լաւագոյն կերպը շարժումն է: Անոնք պատրաստ են իրենց ծեռքերը օգտագործելու մինչ կը խօսին, եւ կը սիրեն ֆիզիքական շարժումներով ներկայացնել այն ինչ որ կ'ըստն: Անոնք ամբողջ մարմնի շարժումներով կը նըտածեն եւ կը զարգացնեն իրենց փոխանցելիք տեղեկութիւնը: Անոնք կը սորվին դպնալով, եւ կը սիրեն իրարմէ զատել առարկաները: Անոնք յաճախ «կը խաղան» առարկաներով եւ աւելի լաւ կը սորվին գործելով, բան թէ տեսնելով կամ լսելով: Թատերական կերպը եւ ծեռային աշխատանքը իտեալ կերպն է այս տեսակի սորվողներուն համար:
- Երաժշտական.**— Երաժշտականօրէն սորվողները չափի բացարիկ զգացողութիւն կ'ունենան, ինչպէս նաեւ խօսակցութեան երաժշտականութեան համելա սէր (ինչպէս բանաստեղծութիւն): Անոնք առհասարակ իրենք զիրենք կ'արտայայտեն երգեր յօրինելով, եւ երաժշտութիւն մը լսելուն պէս՝ շարժումներ կատարելով: Այսպիս սորվողներուն համար երաժշտութիւն, երգ եւ չափաւոր գործիքներ իտեալ միջոցներ են:
- Միջ-անհատական (փոխ-յարաբերական).**— Սորվելու այս մակարդակը կարողութիւն կու տայ սորվողին մարդկային փոխ-յարաբերութիւնները լաւապէս սորվելու: Փոխ-յարաբերական սորվողները շատ լաւ դիտողներ կ'ըլլան, եւ լաւապէս կը կարդան մարմնի լեզուն եւ մարդկային ծայնի իւրայատկութիւնները: Անոնք կրնան ծանօթութիւն տալ, թէ մարդիկ ի՞նչ կը զգան, եւ ըստ այնձ կը պատասխանեն: Անոնք ընկերային ծեռնարկներէ հաճոյք կ'առնեն, ինչպէս նաեւ կը սիրեն աշխատիլ մէկու մը հետ կամ խմբային աշխատանքով:
- Ներ-անձնական-հայեցողական.**— Հայեցողական սորվողները օժտուած կ'ըլլան յատուկ զգայա-

րանքով եւ արթնութիւնը կ'ունենան ճանչնալու իրենց ներքին զգացումները: Անոնք հաջոյք չեն առներ խմբային աշխատանքներէն, այլ կը նախընտրեն մտածել թէ ո՞վ են իրենք, եւ ո՞ւր է իրենց տեղը ընկերութեան կեանքին մէջ: Անոնք երբեմն կը ծանձրանան հաւաքական աշխատանքն, եւ իրենք զիրենք կ'արտայայտեն անձնական՝ առանձնակի աշխատանքներ կատարելով:

ՈՒՍՈՒՑԱՆԵԼՈՒ ՕԳՏԱԿԱՐ ԽՈՐՅՈՒՐԴՆԵՐ ԿՐՈՆՔԻ ՈՒՍՈՒՑԻՉԻՆ ԴԱՍԱՐ

Ի՞նչ բան շեշտել տասը տարեկան աշակերտներուն սորվեցուցած ատեն

Քաջալերեցէք իրենց փորձառութիւններուն անդրադանալը

Տասը տարեկանին, մանուկները մեզի կը դիմեն Աստուծոյ, հաւատքի ու Եկեղեցւոյ մասին զանազան փորձառութիւններով: Հարստացուցէք ձեր կրօնքի դասապահը, քաջալերելով աշակերտները որպեսզի անդրադանան իրենց ունեցած փորձառութիւններուն: Միջոցներ ստեղծեցէք որպեսզի անոնք արտայայտուին իրենց զգացած հաւատքին մասին:

Ձեր կատարած այս օժանդակութիւնը իր կարեւոր տեղը պիտի ունենայ անոնց հաւատքին կազմակերպման մէջ:

Դամայնական կեանքի փորձառութիւններ եւ օրինակներ ներկայացուցէք

Տասը տարեկան երեխաներուն համար շատ կարեւոր է խումբի մը անդամ դառնալը կամ ընկերական միջավայրի մէջ ըլլալը:

Անոնք շատ կը փափաքին իրենց հաւատքին ու աւանդութիւններուն մասին տեղեկութիւններ ունենալ: Միջոցներ ստեղծեցէք անոնց ծանօթացնելու թէ հաւաքական կեանքի մէջ ինչպէ՞ս կ'աղօթեն, ինչպէ՞ս որոշումներ կ'առնեն, Եկեղեցին ինչպէ՞ս հոգ կը տանի աղքատներուն, կամ ինչպէ՞ս Եկեղեցւոյ անդամները իրարու կ'օգնեն, եւայլն: Այս փորձառութիւնները իմանալով, Եկեղեցւոյ հետ իրենց կապը կը զօրանայ եւ նոյնացած կը զգան անոր հետ:

Աստուծոյ պատկերը անոնք կը ճանչնամ Եկեղեցւոյ համայնական կեանքին ընդմէշն: Եկեղեցին ինչ աղդեցութիւն որ ունենայ իրենց վրայ, այդպէս կ'Երեւակայեն իրենք Աստուծոյ կերպարը:

Եկեղեցւոյ օրէնքները անհրաժեշտ են

Մանուկներուն կազմաւորուող բարոյականը եւ օրէնքի հանդէպ իրենց հետաքրքրութիւնը բնականորէն առիթ կ'ընծայեն մեզի, սորվեցնելու անոնց թէ ինչպէ՞ս պէտք է ապրին քրիստոնեաներ: Անոնք ոչ միայն կ'ուզեն սորվիլ այդ օրէնքները, այլ նաեւ կ'ուզեն գիտնալ թէ ուրկէ Եկած են անոնք:

Տասը պատուիրանները սորվելով եւ Եկեղեցւոյ անդամներուն կեանքը դիտելով, անոնք պիտի զանազաննեն ծիշդը սխալէն, եւ ճանչնան առաքինութիւնները եւ մեղքը:

Եկեղեցւոյ բարոյական ուսուցումներուն հանդէպ խորացուցէք անոնց հետաքրքրութիւնն

Անոնք հետզիետ պատասխանատու կը զգան իրենց կատարած գործերուն, ինչպէս նաեւ կարողութիւն կ'ունենան քննարկելու անոնց հետեւանքներուն բարոյական երեսները:

Միջոցներ ստեղծեցէք որպեսզի արտայայտեն իրենց կարծիքը տուեալ արարքի բարոյական երեսին մասին, եւ բնաւ մի՛ թերանաք զանոնք ուղղելէ եւ սըրագրելէ:

Տասը տարեկան երեխաները բարոյական հարցերու սքանչելի զգայնութիւն մը կ'ունենան, սակայն միշտ ալ իմաստութեամբ չեն օգտագործեր իրենց այդ կարողութիւնը:

Տասը տարեկանները հաւատքի պատմութիւնները աւելի դիւրա կ'ընկալեն

Անոնք պատմութիւններ շատ կը սիրեն, կը փափաքին բատերականօրէն ներկայացնել զանոնք իրենց բառերով: Անոնք կրնան պատմութիւնը ներկայացնել այնպէս ինչպէս պատահած է, եւ այնպէս ինչպէս պիտի պատահէր այսօր:

Օգնեցէք անոնց որպեսզի միջոցներ գտնեն, որ Աստուածաշնչական պատմութիւնը կապեն իրենց եւ շրջապատի առօրենյ կեանքին:

Թելադրեցէք, որ մասնակցին աղօթքի կազմակերպման գործին

Անոնք կրնան աղօթքի յատուկ անկիւնը յարդարել:

Ուսուցչին օգնութեամբ, անոնք կրնան աղօթքի հաստուածներ ալ խմբագրել: Կրօնական-ծիսական նիւթեր ու աւանդութիւններ (օրացոյց, տօներ, գոյներ, շարականներ), Եկեղեցւոյ կեանքին հետ կը կապեն զիրենք:

Անոնք թէ հաւաքական եւ թէ անհատական ա-

դօքքներուն նկատմամբ հետաքրքրութիւն կ'ունենան, ուստի երկուք ալ օգտակար պիտի ըլլայ իրենց:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒԶԸ ՈԽՈՒՅԱՆԵԼՈՒ ՄԵԹՈԾԵՐ ՏԱՍԸ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐՈՒ ՑԱՏՈՒԿ

1. Տասը եւ տասնընկ տարեկան պատամիները ժամանակի հատուածներու զգայնութիւն կ'ունենան.- անցեալ, ներկայ եւ ապագայ: Անոնք պատրաստ կ'ըլլան աւելի խորապես հետեւելու Աստուածաշնչական պատմութեանց նիւթերուն: Անոնց հետ միասին աշխատեցէք ժամանակագրութիւն պատրաստելու իրենց կեանքին վերաբերող, ինչպէս նաեւ Յիսուսի երկրաւոր կեանքին մասին: Դին եւ Նոր Կտակարաններու ժամանակագրութիւնները շարունակականութեամբ ներկայացնեցք:
2. Աշակերտները կրնան դէպքերը ընտրել Աւետարաններու այս կամ այն հատուածեն, եւ կրնան նաեւ գծանկարներով ներկայացնել զանոնք:
3. Յաճախ սովորական Աստուածաշունչ մը օգտագործեցք, որպէսզի անոր լեզուին ընտելանան:
4. Թելադրեցք որ իրենց տետրակմերուն մէջ անդրադառնան Աստուածաշնչական կարծ պատմուածքի մը:
5. Տասը տարեկան պատամիները պատրաստ կ'ըլլան սովորական հաստատումներէն անցնիլ քրիստոնեական կեանք ապրելու աստիճանին: Անոնք կրնան Աւետարանի դասերը իրենց կեանքին մէջ փոխադրել եւ դասարանին մէջ խաղաղ մթնոլորտ մը ստեղծել, մինչեւ իսկ աշխատիլ այնպիսի ծրագիրներու վրայ, որոնք արդարութիւն կը հաստատեն իրենց միջեւ:
6. Խմբային աշխատանքները եւ հաւաքարար սորվելու փորձառութիւնը զիրենք կը մղէ մտածելու թէ իրենք կարեւոր մէկ անդամն են այդ խումբին:
7. Խումբի մը կամ հաւաքականութեան մը պատկանելիութիւնը հետզիետ կարեւոր զգացուն մը կը դառնայ իրենց համար: Յաւաքական կեանքի օրինակմեր օգտագործելով Աւետարանէն (քագաւորութեան առակներ, մանամեխի հատիկը, աղ եւ լոյս) պիտի օգնէ իրենց, որպէսզի հասկրնան հաւաքականութեան նկատմամբ իրենց յանձնառութիւնները:
8. Սորվեցուցք անոնց աղօթել ամէն անգամ երբ կարեւոր աշխատանքի մը պիտի լծուին:

ԴԱՍԱՐԱՆԸ ԻՆՉՊԵՍ ԿԱՌԱՎԱՐԵԼ

Խումբ մը երեխաներ կառավարելը, մանաւանդ երբ անոնք պատամեկութեան տարիքի մէջ են, երբեմն հաճելի, երբեմն ալ անտամելի աշխատանք է: Յետեւեալ առաջարկութիւնները օգտագործելով, կրնաք շատ դիրաւ կառավարել ձեր դասարանը եւ դասապահը վերածել հաճելի ժամուան մը:

ՕՐԵՆՔՆԵՐ՝ ՈՐՈՆՑ ՄԻՋՈցԱՐ ՊԻՏԻ ԱՎՐԻՄՔ

Պատամիններ դասարանին մէջ հանգիստ կ'ապրին, երբ գիտնան թէ ի՞նչ է իրենցմէ պահանջուածը: Տարեշրջանի սկզբնաւորութեան ըստք անոնց թէ ի՞նչ են ձեր ակնկալութիւնները դասարանէն: Ապա զիրենք իրաւիրեցէք միասնաբար օրենքներ սահմանելու, որոնց կարիքը ունին, հասնելու համար իրենց նպատակին: Օգնեցէք անոնց որ օրենքներ սահմաննեն, հիմնը լած փոխադրծ յարգանքի, պատասխանառութեան եւ մասնակցութեան վրայ: Այնպէս ըրէք որ օրենքները ընդհանուր ըլլան եւ ոչ թէ մասնաւոր կամ սահմանափակ թիւով: Մեծ պաստարի մը վրայ գրեցէք զանոնք եւ կախեցէք այնպիսի տեղ մը, որ յաճախ անոնցմէ մէկը կամ միւսը մէջբերելը դիրին ըլլայ:

Լաւ ՎԱՐԺՄՈՒՆՔ ՍՈՐՎԵՑՈՒցՔ՝ ՕՐԻՆԱԿՄԵՐՈՎ

Ձեր ուզած վարժունքը ձեւեցէք աշակերտներուն դիմաց: Դուք անոնց պէտք է սորվեցներ Ուսկեայ Օրէնքը. «Ինչ որ կ'ուզգէք մարդիկ ընեն ձեզի, դուք նոյնը ըրէք անոնց»: Աշակերտներու երբ յարգել սորվեցնեք եւ ընդունիք զանոնք այնպէս ինչպէս որ են, իրենք ալ պիտի սորվին նոյնը ընել: Գնահատեցէք զանոնք խօսքով կամ նոյնիսկ ժպիտով:

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵՑՔ ՈՒՍՈՒՄԱԴ ՃԵԼԻ ԻՄԱՍՏՈՎ

Միշտ նոյնութիւն պահեցէք կարելի եղածին չափ դասարանը ողջունելու ճելին, դասը սկսելու եղանակին եւ դասապահը անցընելու կերպին մէջ: Ասիկա որութենական վիճակ մը կը ստեղծէ, որ լաւ վերաբերում կ'արտայայտ:

ԽՄԲԱԿՄԵՐՈՒ ՎԵՐԱԾԵՑՔ ԴԱՍԱՐԱՆԸ

Զանազան ձեռնարկներ կրնան ըլլալ, որոնք կը ստիպեն որ դասարանը խումբերու բաժնէք: Որպէսզի աշակերտները իրենց ուզած դասընկերներուն հետ խումբեր չկազմեն, երբեմն դուք որոշեցէք խումբերը: Եթէ ձեր դասարանը փոքրաթիւ է, կրնաք երկու մեծ խումբերու բաժնել, եւ ոչ թէ դասագիրքին պահանջած

Ժեւով չորս կամ աւելի խումբերու: Կամ, աւելի մեծաթիւ դասարանի պարագային, կրնաք նոյնիսկ ութ խումբերու բաժնել, փոխանակ պահանջուած չորսին: Ապա, երբ Աստուածաշնչական չորս հատուածներ կան որոնք պէտք է քննարկուին, դուք կրնաք անոնցմ երկութը ընտրել փոքրաթիւ դասարանին համար, երկու խումբերուն տալով զանոնք: Խոկ ութ խումբ ունեցող դասարանին պարագային, երկու խումբեր կրնան նոյն բաժինը ուսումնասիրել:

Բարձրածայն կարդալ դասարանին մէջ

Իւրաքանչիւր դաս ունի բաժին մը բարձրածայն կարդացուելու համար: Որոշեցէք թէ ինչպէ՞ս պիտի ընեք այս աշխատանքը: Կարգ մը աշակերտներ կը սիրեն բարձրածայն կարդալ, խոկ ուրիշներ՝ ոչ: Կրնաք երենմ դուք կատարել այդ ընթերցումը, եւ կամաւորներուն բոլով մաս նը: Տարեշրջանի ընթացքին, անոնք որ սկզբնական շրջանին չին ուզեր կարդալ, կրնան վարժուիլ եւ կարդալ փափաքիլ:

Կարելի է նաեւ ամբողջ դասարանին առաջարկել միասնաբար ընթերցումը հատուածին, բոլորը մասնակից դարձնելով, եւ ապա կրնաք զրոյց մը սկսիլ իրենց կարդացածին մասին հարցումներ ուղղելով:

Ուշադրութիւն դարձնելու եւ մտիկ ընելու սովորութիւնը քաջակերեցէք ու զարգացուցէք

Մեղմ ծայն ունեցող ուսուցիչ մը աւելի ուշադրութիւն կրնայ իրաւիրել իր վրայ, քան բարձր ծայն ունեցող նը: Զեր ծայնին մէջ բարձր ու ցած աստիճանաւորում դնելը կրնայ ազդել աշակերտներու ուշադրութիւնը իրաւիրելու ինաստով: Բնաւ մի սկսիք խօսելու, մինչեւ որ բոլորին ուշադրութիւնը ծեր վրայ չեղորնացընք: Լուր սպասելը արդէն նշան մըն է իրենց համար: Յստակ խօսեցէք եւ խուսափեցէք ծեր ըսածը կրկնելէ անուշադիր աշակերտներուն համար:

Աշակերտները տեղեակ պահեցէք օրուան ծրագրին մասին

Զեր աշակերտներուն ըսէք թէ օրուան ծրագիրը ի՞նչ է: Բերանացի ըսելէ բացի, գրատախտակին վրայ արձանագրեցէք օրուան ծրագրին ուղեցոյցը:

Կարգ կանոնին հոգ տարէք

Երբ աշակերտներէն մէկը անհնազանդ գտնուի, մի՛ «գնահատէք» զայն բոլորին ուշադրութիւնը անոր վրայ իրաւիրելով: Կամաց մը անոր մօտեցէք եւ յիշեցում կատարեցէք դասարանի օրէնքներուն մասին:

ՈՒՍՈՒՑՁՅԻ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՅՑԸ ԳՈՐԾԱԾԵԼՈՒ ԿԵՐՊԸ

Ուսուցչի Ուղեցոյցը նպատակ ունի օգնելու եւ առաջնորդելու ուսուցիչը իւրաքանչիւր դաս պատրաստելու եւ սորվեցնելու համար: Ան կը ներկայացնէ հետեւեալ ընթացքը:—

Դասին բնաբանը.— Նպատակն է իմանական նիւթը փոխանցել աշակերտներուն:

Աստուածաշնչական հատուածներ.— Դասերը անոնց վրայ իմանուած են: Իւրաքանչիւր էջի սկզբնաւորութեան պիտի գտնեք աստիք, ինչպէս նաեւ այս ուղեցոյցին մէջ: Աշակերտներուն հետ հանդիպելէ առաջ ասոնց պէտք է նայիք:

Ուկեայ Համար.— Համարը առնչուած կ'ըլլայ դասին ընդհանուր նիւթին հետ, եւ պէտք է զոց սորվի զայն իւրաքանչիւր աշակերտ: Այս համարը կարելի է օգտագործել որպէս բացման կամ փակման աղօքք:

Ընկալումներ.— Ցանկը կազմեցէք այն կարեւոր գիտելիքներուն, որոնք իւրաքանչիւր աշակերտ պէտք է գիտնայ: Այս գիտելիքները ուսուցիչը պարտականութեան վրայ կը պահեն: Այս գիտելիքներուն ակնարկելով, ուսուցիչը կրնայ գիտնալ թէ Աստուածաշնչական դրուագին ո՞ր բաժինները աւելի պէտք է ընդգծուին, եւ պարտականութիւնները ինչպէ՞ս պիտի օգնեն իրականացնելու այդ:

Զեւատրում.— Իւրաքանչիւր դասի բովանդակութիւնը դասաւորեցէք հարկ եղած ժամանակով: Միշտ յիշեցէք, որ ժամանակի սահմանը ուղեցոյց է, անշուշտ քիչ մը աւելի կամ քանի մը վայրկեանը հարց չէ, նայած աշակերտութեան թիւին եւ անոնց կարողութեան: Ցանենայնէպս, մտքի մէջ ունենալով սահմանուած ժամանակը, ծեզ պարտաւորութեան տակ պիտի դնէ ճիշդ ժամանակին աւարտելու դասին բոլոր մասերը:

Չարկ եղած առարկաներ.— Կարգ մը նիւթերու պատրաստութիւնը եւ դասարանին մէջ գտնուիլը օգտակար պիտի ըլլայ թէ ծեզի եւ թէ աշակերտներուն:

Ուսուցչին ներածականը.— Ասոր կը յաջորդէ ուսուցչին ներածականը: Այս բաժինը կրօնական ու հոգե-

ւոր Ենթահող մը կու տայ ուսուցին հեղինակութիւնը բարձրացնելով; Այս բաժնին մէջ նշուած կէտերը մեծերուն համար մտածելու արիթ կու տան, եւ պայման չէ զանոնք ներառնել դասին մէջ: Այստեղ դուք պիտի գտնէք նաեւ մտածումներ, որոնք ցոյց կու տան այն գլխաւոր կէտը, զոր Աստուածաշնչական պատմուածքը կ'ուզէ փոխանցել աշակերտներուն: Պետք է քաջալերուած զգաք այս բաժինը Աստուածաշնչական հատուածին հետ կարդալու, եւ նաեւ ժամանակ տաք մտածելու թէ այսօր այդ հատուածը ի՞նչ կ'ըսէ ձեզի:

Նախապատրաստութիւն.— Ցոյց կու տայ ինչպէ՞ս պատրաստուիլ եւ ի՞նչ պատրաստութիւն պէտք է տեսնել, եթէ հարկաւոր ըլլայ:

Ընթացք.— Քայլ առ քայլ բացատրութիւն կու տայ ամբողջացնելու համար իւրաքանչիւր դասին կառոյցը, որ նշուած է ստորեւ:

Բացման աղօթք.— Դասապահը միշտ սկսէք դասին մէջ առաջարկուած աղօթքով, կամ ծեր նախընտրած մէկ աղօթքով:

Գիտե՞ր.— Ասիկա պիտի օգնէ աշակերտներուն, Աստուածաշնչական նիւթը կեանքի փորձառութեան մէջէն տեսնելու:


Աստուածաշնչական դասը.— Ասիկա կը հետեւի ծեռնարկներուն, աւելի զօրացնելու համար նիւթին վերաքաղը: Մանրամասնորեն տրուած ուղղութիւնները պիտի առաջնորդեն ուսուցիչը անբողջացնելու իր դասը: Այստեղ կարելի է գտնել նաեւ հարցումներուն պատասխանները եւ առաջարկութիւններ՝ ուղղուած ուսուցիչներուն:

Դոգեւոր բառարան.— Այստեղ կը բացատրուին «Աստուածաշնչական հատուած» կամ «Կեանքը Եկեղեցւոյ մէջ» մասերեն քաղուած դժուարահասկնալի բառեր, որոնք կ'օգնեն աշակերտներուն հաւատքին առնչուող գիտելիքներու հարցուացման:

Կեանքը Եկեղեցւոյ մէջ.— Այս բաժինը Աստուածաշնչական դասը կը կապէ Եկեղեցւոյ աւանդութիւններուն եւ կեանքին հետ, զայն գործնապէս կիրարկելու համար:

Տան մէջ՝ ընտանիքին անդամներուն հետ.— Տրուած դասին վերաքաղը դիւրացնելու համար է, այնպիսի պարտականութիւններով, որոնք աշակերտներ իրենց ծնողներուն հետ կրնան կատարել:

Փակում.— Դասապահերը միշտ յարմար աղօթքով մը փակեցէք, կամ դասէն առնելով եւ կամ ծեր նախընտրութեամբ:



Դաս 1 – ՅԻՍՈՒՄԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Բնաբան – Յիսուս Քրիստոս իր յարութեմէն ետք շարունակեց ուղղութիւն տալ իր աշակերտներուն, եւ խոստացաւ Սուրբ Հոգին դրկել անոնց:

Աստուածաշունչ – Ղուկաս 24.33-35, Գործը Առաքելոց 1.1-11:

Ոսկեայ Համար – «Մինչ անոր կը նայէին, Յիսուս երկինք համբարձաւ, եւ ամպ մը ծածկեց զինք անոնց տեսողութեմէն» (Գործը Առաքելոց 1.9):

Ընկալումներ – Աշակերտները պէտք է կարենան.-

1. Գիտնալ իրենց սորվածները իրենց ուսուցչն, ինչպէս առաքեալները սորվեցան Յիսուսէն:
2. Նկարագրել հիմնական գաղափարները եւ դէպքերը Յիսուսի համբարձման պատկերին մէջ:
3. Իրենց կեանքին հետ առնչել Յիսուսի խոստումը, թէ՝ «Զեզի հետ պիտի ըլլամ, եւ ոչ ոք ձեր վրայ իշխանութիւն պիտի ունենայ»:

Զեւաւորում –

- Բացման աղօթք եւ Գիտէի՞ն (10 վայրկեան):
- Աստուածաշնչական պատմութիւն, Հոգեւոր բառարան, Մտածենք պատմութեան մասին (20 վայրկեան):
- Համբարձման տօնը կը տօնենք (10 վայրկեան):
- Ս. Շուշան Վստահեցաւ Յիսուսի խոստումին (10 վայրկեան):
- Քարտէսի աշխատանք (5 վայրկեան):
- Փակման աղօթք (5 վայրկեան):

Դարկ եղած առարկաներ – Աստուածաշունչներ եւ գունաւոր գրիչներ:

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՉԻՒՆ ՀԱՄԱՐ

Աստուածաշնչական ենթահոդը

Յիսուսի դէպի երկինք՝ իր Յօր մօտ համբարձումն կարեւոր անկիւնադարձ մըն էր իր աշակերտներուն համար: Յիմա որ Յիսուս այլեւս իրենց հետ պիտի չըլլար ֆիզիքապէս, ժամանակն էր որ այլեւս իրենք երթային եւ ուրիշներուն սորվեցնէին այն ինչ որ իրենք սորված էին Յիսուսէն: Ամէն բան առաջ, անոնք պէտք է փրկութեան բարի լուրջ տային իրաքանչիւր անձի որ հանդիպէին: Տերը գիրենք լաւապէս պատրաստած էր այս աշխատանքին համար: Առաջին, Ան երեւցաւ անոնց եւ վստահեցուց թէ Ինք յարութիւն առած է, այնպէս ինչպէս նախապէս ըսած էր: Ապա Ան յիշեցուց անոնց, թէ Ինք անբողջացուցած է Յին Կտակարանի մարգարեւութիւնները: Այս վստահութեամբ, առաքեալները ապահովաբար կրնային սորվեցնել եւ քարոզել

Աստուծոյ Որդիին մասին: Ասիկա գիրենք երջանկացուց մեծ ուրախութեամբ, մինչ կը վերադառնային դէպի երուսաղէմ:

Ապա, Գործը Առաքելոց գիրքին մէջ կը կարդանք, որ Յիսուս կը խոստանայ առաքեալներուն ղըրկել Սուրբ Հոգիին զօրութիւնը: Այս խոստումին իրականացումով, անոնք գիտցան թէ պիտի կարենան Յիսուսի փրկագործական ծրագիրը իրագործել մարդոց կեանքին մէջ:

Աշակերտներուն համար

Տասը տարեկան երեխաները այնպէս ինչպէս «լաւագոյն ընկերո» մը կ'ունենան, նոյնպէս ալ շատ կը վստահին ուսուցչի մը զոր շատ կը սիրեն եւ որ գիրենք կը քաջալերէ ինքնավստահ ըլլալ, ինքնանկախ ըլլալ դաս սորվելու եւ գործ ընելու մէջ:

Այս դասին ընթացքին օգնեցէք աշակերտներուն, որպեսզի անդրադառնան թէ այնպէս ինչպէս իրենց իրենց ուսուցիչներէն որոշ դասեր սորված են (կարդալ, գրել), նոյնպէս ալ Յիսուս Քրիստոս իր առաքեալներուն սորվեցուց եւ պատուիրեց որ երթան ու օգտագործեն իրենց սորվածները:

Համբարձումը այն դէպքն է, որու ընթացքին Յիսուս պատուիրեց իր առաքեալներուն երթալու եւ օգտագործելու այն ինչ որ իրմէ սորվեցան, որովհետև այլեւս ինք ֆիզիքապէս իրենց հետ պիտի չըլլար: Ան խոստացաւ անոնց, թէ Սուրբ Յոդին զօրութիւնը պիտի ստանան, որպեսզի այս աշխատանքը կարենան կատարել ազդու կերպով, մինչեւ հեռաւոր երկիրներ: Քարտէսի աշխատանքը աշակերտներուն գաղափար մը կու տայ այն հսկայ տարածութեան մասին ուր գործեցին առաքեալները:

ԴԱՍԱՌԱՆԴՄԱՆ ԿԱՐԳԸ

Բնական պուրակ

Դասապահին բացումը կատարեցէք Տէրունական Աղօթքով:

Գրտեղք...

Միասնաբար կարդացէք այս հատուածը: Աշակերտներուն ըստք որ իրենց կարդացած եւ հաճոյք առաջ գիրքին կամ պատմութեան անունը դնեն այստեղ: Առիք տուէք անոնց որպեսզի իրենց մտածած պատախանները ըսեն ծեզի:

Ասուհածաշական դասառութիւն

Աշակերտներուն ըստք որ պատկերին նային: Յարցուցք. «Մէկը կրնա՞յ խօսիլ մեզի այս երկու մարդոց մասին: Ո՞վ է երրորդ անձը»:

Միասնաբար կարդացէք Աստուածաշնչական պատմութիւնը:

Կարդացած ժամանակ դադար առէք եւ քանի մը հարցումներ հարցուցէք գիրենք ներգրաւելու համար:

Առաջին պարբերութեան համար հարցուցք. «Ինչո՞ւ տասնընէկ առաքեալներ կային»:

Երկրորդ պարբերութեան պարագային հարցուցք. «Ինչո՞ւ անոնք վախցած էին ու շուարած»: Մտիկ ըրէք իրենց տալիք պատասխանները, եւ ապա ուղղութիւն տուէք թէ՝ դրները գոյ էին, եւ յանկած իրենց թաղած Յիսուսը տեսնելը իրենց միջեւ, բնականաբար վախ կը պատճառէր: Եթէ մէկը չըսէ թէ դրները գոյ էին, թէլարեցէք որ բնագիրին նային Աստուածաշնչին

մէջ, բաղդատելով Ղուկասու հատուածը Յովհաննէս 20.19-ին հետ:

Եթր հասմիք «քաղաքին մէջ մնացէք, որովհետեւ Սուրբ Յոդին պիտի ստանաք... զօրութիւն պիտի ստանաք երբ Սուրբ Յոդին գայ ծեր վրայ...», հարցուցք. «Ի՞նչ մտածեցին արդեօք առաքեալները, եթր այս խօսքերը լսեցին»:

Հոգեւոր բառութեան

Աստուածաշունչ՝ Սուրբ Գիրքին մէջի գրութիւնները: Այստեղ մեզի կը պատմուի Աստուածոյ ծրագիրը այս աշխարհի համար, եւ Յիսուսի մասին՝ իրեւ Փօրկիչ:

Վկայ՝ մէկը որ իր տեսածին մասին ուրիշներուն կը պատմէ: Առաքեալները «Վկաներն էին Յիսուս Քրիստոսի, որովհետեւ անոնք իր մասին պատմեցին ուրիշներուն:

Քաւող՝ փրկիչ, կամ ամծ մը որ կորսուածը կը գտնէ: Յիսուս Քրիստոս ազատեց մեզ եւ վերադարձուց իր Յօր՝ Աստուածոյ:

Ոսկեան Համար

Գործը Առաքելոց 1.9: «Մինչ անոր կը նայէին, Յիսուս երկինք համբարձաւ, եւ ամաց մը ծածկեց գինք անոնց տեսողութենէն»:

Գոյ սորվեցուցէք այս համարը, եւ կամ զայն փակման աղօթք իրեւ օգտագործեցէք:

Դասմուհեան Վերաբառութեան

Աշակերտները թող ամբողջացնեն «Մտածենք պատմութեան մասին» բաժինը. այս բաժնին պատախանները հետեւեալներն են.-

Առաջին նախադասութիւնը.- Պատասխանները պէտք է ներառնեն առաքեալներուն զգացումները, թէ իրենք մեծ պատասխանատուութեան մը կանչուած են Յիսուսի կողմէ: Անոնք պէտք է նաեւ վստահութեամբ լեցուած ըլլան, իր խոստումը լսելէ ետք:

Երկրորդ նախադասութիւնը.- Յիմա առաքեալները վստահաբար գիտցան, թէ իրենց Տէրը միշտ իրենց հետ պիտի ըլլար, հակառակ որ այլեւս այս աշխարհի վրայ պիտի չըլլար: Անոնք նաեւ գիտցան որ իրենք մեծ պարզեց մը ունին աշխարհին տալիք՝ Յիսուսի սիրոյն ապահովութիւնը եւ փրկութեան խոստումը:

Քանի մը աշակերտներ կանչեցէք որպեսզի իրենց մտածումները արտայայտեն: Եթէ աշակերտներուն ըսածները չեն համապատասխաներ վերեւ ըստածներուն, դուք ըստք զանոնք:

Մասք՝ եւ ուսմք՝

Երկու հարցումներուն շուրջ զրուցեցք խումբերու մէջ: Քանի մը աշակերտներու առթ տուեք որպես զի իրենց մտածումները արտայայտեն այս մասին:

Կեսար՝ Եկեղեցական մէջ

ԴԱՄՐԱՐՉԱՆԱ ՏՕՆԸ ԿԸ ՏՕՆԵՆՔ

Օգնեցեք աշակերտներուն որպէսզի նկարներուն բացատրութիւն տան: Աշակերտներուն ցոյց տըլեք Յիսուսի զիշուն շուրջ գտնուող հրեշտակները, որ ցոյց կու տայ թէ այդ դէպքը երկնային կամ աստուածային իմաստ մը ունի:

Երրորդ հարցումին, Յուրաքան կը բացակայի պատկերն, որովհետեւ մատնած էր Յիսուսը եւ այլեւս մաս չէր կազմեր առաքեալներու խումբին:

Շարականին բառերը պէտք է աւելցուին հետեւեալ շարքով.-

**Հրեշտակները, երգ, Թագաւորը, Փրկիչը,
Ազատիչը, Վեր, Կազմիչը**

Թերեւս ուզեք միասին երգել շարականը: Ստորեւ տեսէք անոր բառերն ու նոթաները:

ճաշու շարական Յամբարձման ԱԶ դրձ.

Ա. Հուշան ՎԱՏԱՀԵՅԻ ՅԻՍՈՒԽԻ ԽՈՍՏՈՒԽԻՆ

Աշակերտները իրակիրեցէք որ հերթաբար կարդան պատմութիւնը: Յարցումներուն թող պատասխանեն, եւ այդ մասին զրուցեցէք իրենց հետ:

Քարտէս ԱՇԽԱՏԱՆՔ

Այս բաժնին մէջ քարտէսի աշխատանքը դժուար չէ աշակերտներուն: Իրենց կատարած սրբագրեցէք հերթաբար:

ԸՆՄԱԽԵՐԵՒ ԱՆԴԱՄԱՆԵՐՈՒ ՀԵՏ

Քաջալերեցէք աշակերտները, որպէսզի պարտականութիւնները իրենց ծնողներուն հետ ամբողջացնեն: Կրնաք նաև ըսել որ կլորի մէջ առնեն իրենց ամբողջացուցած պարտականութիւններուն թիւերը, եւ պահանջեցէք որ ծնողները ստորագրեն էջատակին, հաստատելով թէ տեսած են իրենք այդ տան պարտականութիւնը:

ՓԱԿԱԽԱ ԱՊՈՅԹ

Յամբարձման շարականը երգեցէք իբրեւ փակման աղօթք:

Դաս 2 – ՀՈԳԵԳԱԼՈՒՏ

Բնաբան – Սուրբ Հոգին կարողութիւն տուաւ առաքեալներուն, եւ նաեւ մեզի կարողութիւն պիտի տայ, որպէսզի նոր ու նշանաւոր գործեր կատարենք, զորս բնաւ չեինք ակնկալեր ընել:

Աստուածաշունչ – Ղուկաս 24.49, Յովհաննէս 14.25-26, Գործը Առաքելոց 2.2-41:

Ոսկեայ Համար – «Ամէն ներկաները Սուրբ Հոգիով լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներով խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար» (Գործը Առաքելոց 2.4):

Ընկալումներ – Աշակերտները պէտք է կարենան.–

- Պատմել իրենց աճման մասին, ըսելով թէ իիմա կրնան այսինչ աշխատանքը կատարել, զոր իրենց կանուխ տարիքին չեին կրնար ընել:
- Նկարագրել Հոգեգալուստի դէպքին կարեւոր բաժինները եւ պատկերին մէջի գլխաւոր կերպարները:
- Պատմել թէ Սուրբ Հոգին ինչպէ՞ս եկաւ առաքեալներուն վրայ եւ կարողութիւն տուաւ անոնց կատարելու այն ինչ որ մինչեւ այն ատեն չեին կատարած:

Զեւաւորում –

- Բացման աղօթք եւ Գիտէի՞ր (10 վայրկեան):
- Աստուածաշնչական պատմութիւն, Մտածենք պատմութեան մասին (15 վայրկեան):
- Հոգեգալուստի տօնը (10 վայրկեան):
- Կատարելիք աշխատանք մը (10 վայրկեան):
- Եկէր աւելին սորվինք (10 վայրկեան):
- Փակման աղօթք (5 վայրկեան):

Հարկ եղած առարկաներ –

- Բարձրախօսի նկար մը, կամ իրական բարձրախօս մը:
- Անիւ մը շինելու համար՝ խէժ, ներկելիք գրիչներ, մկրատներ, մատիտ մը իւրաքանչիւր աշակերտի համար որ իր ետին սորիչ ունենայ, եւ շիտակ գամ մը իւրաքանչիւր աշակերտի համար:

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՉԻՒՆ ՀԱՄԱՐ

Աստուածաշնչական ենթահողը

Այս համարները ցոյց կու տան, թէ Յիսուս Սուրբ Հոգին դրկելու իր խոստումը յարգեց, որ պիտի գար առաքեալներուն վրայ ու անոնց կարողութիւն տար գործադրելու այն բոլորը, զոր Յիսուս սորվեցուցած էր իրենց:

Գործը Առաքելոցն քաղուած հատուածը մեզի կը յիշեցնէ, թէ Յին Կոտակարանի խոստումները, որոնք մեր Փրկիչին համար կատարուած էին, բոլորն ալ ամբողջացան Յիսուս Քրիստոսի անձին մէջ: Իւրաքանչիւր անձ որ լաւագէս ծանօթ էր Յին Կոտակարանին եւ կը լսէր Պետրոսի կատարած քարոզութիւնը Հոգեգալուստեան օրը, պէտք է գիտցած ըլլար, որ Յիսուս այդ բոլոր ըստածներուն կատարումն էր:

Աւելին, Պետրոս ժողովուրդին ուղղութիւն տըւաւ, ցոյց տալով Յիսուսի հետեւելու ճամբան: Ան յայտնեց նաեւ, որ իրենցմէ ոմանք մասնակից եղած էին Յիսուս Քրիստոսի կրած տառապանքներուն: Սակայն, փրկութեան ճամբան բաց է անոնց դիմաց եւս, որովհետեւ Աստուած սիրող ու ներող Հայր է, եւ իր Որդին ալ սիրող եւ ներող Փրկիչն է ամբողջ մարդկութեան:

Աշակերտներուն համար

Տասը տարեկան երեխաները ընտրութեանց դիմաց զգացած իրենց վախով, անհաստատանտութեամբ եւ անորոշութեամբ, փորձառութիւն շահած կ'ըլլան, թէ այդ բոլորը աւելի յստակութեան եւ նախածեռնութեան կը տանին գիրենք: Անոնց գիտակցութիւնը կը զարգանայ, իրենց ընկերային ու զգացական ազդակ:

Աերով: Այս զարգացումները կ'արդինաւորուին, եթք նոր վստահութիւն եւ ապահովութիւն ունենան իրենց կատարած գործերուն նկատմամբ:

Այս դասը կ'օգնէ աշակերտներուն որ հասկնան, թէ նոյն փորձառութիւնը ունեցան նաեւ առաքեալները Սուրբ Հոգին միջոցաւ: Այս պարզ մարդիկը, ոչ այնքան վստահ իրենց կարողութեանց նկատմամբ, Յիսուս Քրիստոսի վկաները դարձան հազարաւոր մարդոց դիմաց:

Հոգեգալուստի տօնին Յիսուսի խոստումը կատարուեցաւ, եթք Հոգին եկաւ սաստիկ հովի նման եւ կրակէ լեզուներու նման համզչեցաւ հիրաքանչիւր առաքեալի վրայ: Ասիկա սկիզբն էր այն աշխատանքներու կատարման իրենց կողմէ, որոնց մասին չէին լսած նախապէս:— Բազմութեան խօսիլ ու համոզել զանոնք անոնց իսկ խօսած լեզուներով, հեռու երկիրներ երթալ եւ խօսիլ Յիսուս Քրիստոսի ու Աստուծոյ Թագաւորութեան մասին, եւ քաջութիւն ունենալ հակառակորդներու եւ թշնամական ոգի ունեցող մարդոց դիմաց կանգնելու եւ հալածանքներու ենթարկուելու:

Կ'ուզենք որ աշակերտները վստահութիւն ունենան Աստուծոյ սիրող առաջնորդութեան, եթք անոնք կը սորվին առաքեալներուն սքանչելի փորձառութեանց մասին: Ասիկա կրնայ շատ նմանութիւններ ունենալ իրենց անձնական կեանքին հետ:

Ուշադիր եղէք, որ տօնին խորհուրդը ներկայացնող պատկերը մասնաւոր կերպով կը շեշտէ Հոգեգալուստի ծշմարտութիւնները, որոնք կարենի չէ գտննել Աստուծաշունչի բնագրին մէջ: Ասիկա բացատրուած է աշակերտական գիրքին մէջ, եւ դուք պէտք է շեշտէք այդ:

ԴԱՍԱՌԱՄԱՆ ԿԱՐԳԸ

Բնամսն սուօթե

Դասապահը սկսէք Հոգեգալուստի շարականը երգելով:

Գրտե՛ր...

Այս բաժինը սկսէք աշակերտներուն ցոյց տալով բարձրախոսը, եւ հարց նույեք անոնց թէ ինչո՞ւ համար է այդ: Աշակերտներուն ըստք թէ իմաց իրենց պիտի ներկայացնեք, թէ ինչպէ՞ս իրենց տարիքի մէկը զայն օգտագործած է այնպիսի ծրագրի մը համար, որուն մասին բնաւ չէր խորհած նախապէս: Պատմութիւնը կարդացէք եւ անոր հետեւող գրաւոր պարտականութիւնը կատարեցէք: Աշակերտները կրնան իրենց պատասխանները ամբողջ դասարանին փոխանցել, եթէ փափաքին:

ՎԱՏՈՒԺԱԾՆԵՍԿԱՆ ԴԱՏՄՈՒԹԻՒՆ

Միասնաբար կարդացէք պատմութիւնը: Կարդալու ժամանակ անոնց հարցուցէք. «Գիտէ՞ք թէ քանի երկիրներէ իրեաներ երուսաղէմ եկած էին այդ օր: Կարդացէք ձեր Աստուծաշունչէն Գործք Առաքելոց 2.5-11 համարները եւ ցուցակը պատրաստեցէք այդ երկիրներուն»: Պատմութեան աւարտին, ուղղութիւն տուուք աշակերտներուն նայելու Սաղմոս 17.7-11-ին, եւ հարցուցէք անոնց. «Այս նախադասութիւններէն որո՞նք ձեզի կը յիշեցնեն Պետրոսի խօսքերը պատմութենէն»:

Հոգեւոր բառարաւ

Մարգարէ անձ նը, որ ժողովուրդին կ'ըսէ թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը: Երբեմն մարգարէն ժողովուրդին կ'ըսէ այն ինչ որ պիտի պատահի, եթէ անոնք հետեւին Աստուծոյ կամքին, եւ նաեւ թէ ի՞նչ կրնայ պատահիլ եթէ չհետեւին: Սակայն մարգարէն բախտագուշակ նը չէ:

Ուսկեսա Համար

Գործք Առաքելոց 2.4: «Ամէն ներկաները Սուրբ Հոգիով լեցուեցան եւ սկսան տարբեր լեզուներով խօսիլ, ինչպէս որ Հոգին խօսիլ կու տար»:

Գոյ սորվեցուցէք այս Ուսկեայ Համարը, եւ կամ զայն օգտագործեցէք փակման աղօթքի ընթացքին:

ԴԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԱՐ

Վերաբաղ ըրեք «Մտածենք պատմութեան մասին» բաժինը:

1. Առաջին հարցումին պարագային, աշակերտները կրնան իրենց անձնական տեսակետները փոխանցել:
2. Հոգեգալուստը Եկեղեցւոյ «ծննդեան» տօննէ, որովհետեւ այդ օրն էր որ ժողովուրդը առաջին անգամ հաւաքուեցաւ իբրև Յիսուս Քրիստոսի հետեւորդներ:

Կեսար՝ ԵԿԵՂԵՑԻՑ ՄԵԶ

ՀՐՈԳԵԳԱԼՈՒԽՏԻ ՏՕՆԸ

Նախաբանը կարդացէք եւ ապա ամենքդ միասին նայեցէք պատկերին: Աշակերտներուն արիք տըւէք, որ առանձնաբար աշխատին, բացատրութեանց սիւնակին մէջի գրութիւնները իմաստներու սիւնակին գրութեան հետ զուգորդել:

Ապա դասարանը բաժնեցէք երկու խումբերու: 1-5 թիւ տուուք առաջին խումբի աշակերտներուն: Ապա ա-ե տառերը տուուք երկրորդ խումբի աշակերտներուն: Ապա «թիւ» կրող աշակերտները թող բաղդատեն ի-

դենց գտածները «տառ» կրող խումբի աշակերտներուն գտածներուն հետ: ճիշդ պատասխաններն են՝ 1/դ, 2/ա, 3/թ, 4/ե, 5/գ. աշակերտները երկու երկու թող բացատրեն նկարին մեջ պատկերուածը իրենց դասընկերներուն:

Ծանօթ. – Եթէ տասէ աւելի են ձեր աշակերտները, այդ պարագային միայն հինգ աշակերտի տառեր տուեք: Նոյն թիւը կրնաք մէկէ աւելի աշակերտներու տալ, որոնք պիտի երթան եւ միևս խումբի աշակերտներուն գտած պատասխանին ճշգրտութիւնը հաստատեն: Եթէ տասէ աւելի թիւ են աշակերտները, կրնաք մէկէ աւելի թիւ տալ իրաքանչիւր աշակերտի: Դուք ալ կրնաք թիւ մը առնել ի պահանջել հարկին:

Դասարարանաթես սժիստը

Հովի մասին հատուածը միասնաբար կարդացէք: Աշակերտները իրենց տպաւորութիւնը թող գրեն անոր մասին:

Աշակերտները թերեւս հովի հետ ունեցած իրենց փորձառութեան մասին ուզեն գրել (փորորիկ մը կրնայ պատահած ըլլալ, ամպեր տեսած կ'ըլլան, վազած ժամանակ հով զգացած կ'ըլլան իրենց դէմքին վրայ, եւայլն):

ԵԿԵՐ ՄԻԵՒԻՆ ՍՈՐՎԻԱԲ

Աշակերտները իրենք թող լուծեն խաչքառը: Իրաքանչիւրին օրինակ մը տուեք այս աղիւսակէն, եւ ռետինով մատիտ: Միայն քննեցէք պատասխանները:

Ուղղահայեաց

- 1) Այս անունով առաքեալը իրաշալի քարոզ խոսեցաւ ժողովուրդին, այդ մեծ տօնին օրը:
- 2) Այդ օրը քանի՞ հազար հոգի մկրտուեցաւ:
- 5) Գործք Առաքելոց 2.10 համարին մեջ նշուած 3-րդ երկիրը:
- 6) Գործք Առաքելոց 2.9 համարին մեջ նշուած առաջին երկրին անունը:
- 7) Գործք Առաքելոց 2.10 համարին մեջ նշուած ուրիշ տեղանուն մը:
- 11) Այդ օր առաքեալները խոսեցան տարբեր բարբառներով կամ....:

Դորիգոնական

- 3) Յիսուս Քրիստոսի յարութեան եւ այդ տօնին միջեւ գտնուող օրերուն քանակը (տես «Կեանքը Եկեղեցւոյ մէջ» բաժինը):
- 4) Տօնին անունը, որուն առիթով առաքեալը ճառ խոսեցաւ:
- 8) Առաքեալները նախ զգացին Սուլը Հոգին իրեւս սաստիկ ի՞նչ բան:
- 9) Քաղաքը՝ ուր տեղի ունեցաւ այս մեծ տօնը եւ իրաշը:
- 10) Անիկա հին տօն մըն էր, որ ժողովուրդին կողմէ կը նշուեք:

Պարտականութեան

Հովը այնպիսին է, որ նաեւ մեզի կրնայ հաճոյք պատճառել: Հողմանիւ մը շինելու համար, զոր աշակերտները կրնան հովին դիմաց բռնել, սորվեցուցք անոնց թէ ինչպէ՞ս պիտի շինեն զայն: Նիւթերու բաժինն մէջ հարկ եղած առարկաները ցուցակագրուած են:

- Քառակուսի կտրեցէք հողմանիւը: Ապա մէջի մութ գիծերը կտրեցէք, սակայն զգուշութեամբ, որպէսզի մէջտեղի կլոր մասը չկտրէք:
- Ներկեցէք ներքին եւ արտաքին մասը հողմանիւին, ձեր նախասիրած գոյներով:
- Իրաքանչիւր անկիւնին կետը գտէք: Չորս կետեր պէտք է ունենայ ան:
- Ծոեցէք թուղթը, որպէսզի իրաքանչիւր անկիւնը փակցնէք կեդրոնի կտիխն:
- Կետը միացուցէք ձեր մատիտի սրբիչին:
- Դարձուցէք հողմանիւը, վատահ ըլլալու որ կ'աշխատի:
- Աշակերտներուն ըսէք. «Յետոյ կրնաք վազել հովին դիմաց, հողմանիւը բռնելով ձեր գլուխէն վեր, ձեր դիմաց: Վայելեցէք եւ տեսէք թէ հովը ինչե՞ր կրնայ ընել»:

			¹⁰ Փ	⁵ Ե	Ր	Ք			
			զ				² Ե		⁷ Ց
			Ի				Ր		Ո
				⁴ Ղ	Ե	Ն	Տ	Կ	Ո
				Տ			Ս	Ս	Ե
					¹¹ Լ		Ո		
					Ե	³ Յ	Ի	Ս	Ւ
					Զ				
¹ Ղ									
Ե	Ր	Ո	Ւ	Ս	Ա	Ղ	⁶ Ս		
S	Ի							Ի	
Ր		Ն						Զ	
Ո		Ե						Ս	
Ս		Ր						Գ	
⁸ Ց	Ո	Վ					Ե		
		Վ					Տ		
							Տ		
							Պ		

ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄԱՆԵՐՈՒՄ ՀԵՏ

Քաջալերեցէք աշակերտները, որպեսզի պարտականութիւնները իրենց ծնողներուն հետ ամբողջացընեն: Կրնաք նաեւ ըսել որ կլորի մէջ առնեն իրենց ամբողջացուցած պարտականութիւններուն թիւերը, եւ պահանջեցէք որ ծնողները ստորագրեն էջատակին,

հաստատելով թէ տեսած են իրենք այդ տան պարտականութիւնը:

ՓԱԿՄԱՆ ԱԴՈՒԹՔ

Յոզեգալստեան շարականը երգեցէք իբրև փակում այս դասապահին:



Դաս 3 – ԻՄ ԱՆՈՒՆՎՍ ԴԱՒԱՔՈՒԻԼ

ԲԹԱՔԲԱՆ – Յիսուս Քրիստոս մեզի կը պատուիրէ միասնաբար աշխատիլ եւ միասնաբար պաշտել գինք սիրոյ մթնոլորտի մեջ:

ԱՍՏՈՒԱԾՈՎՈՒՄԸ – Մատթեոս 18.19-20, Ղուկաս 24.33-43, Գործը Առաքելոց 1.12-14 եւ 2.42:

ՈՍԿԵԱՅ ՀԱՋԱՐ – Որովհետեւ ուր որ երկու կամ երեք հոգի հաւաքուին իմ անունովս, ես հոն եմ՝ անոնց միջեւ (Մատթեոս 18.20):

ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ – Աշակերտները պէտք է կարենան.-

1. Գիտնալ, թէ բարեկամներ իրարու կրնան օգնել միասնաբար աշխատելով:
2. Բացատրել թէ ի՞նչ կերպեր ներկայացուց Յիսուս, ցոյց տալով իր առաքեալներուն, թէ իրենց հետ պիտի ըլլայ միշտ, նոյնիսկ այս աշխարհեն իր բացակայութեան ժամանակ:
3. ճշգրիտ հերթականութիւնը ներկայացնել այն դէպքերուն, որոնք տեղի ունեցան Յարութենէն մինչեւ Հոգեգալստեան օրը:
4. ճանչնալ Սուրբ Պատարագը, իբրեւ մեր կողմէ միասնաբար կատարուող նուիրական արարք մը:

ԶԵՒԱՏՐՈՒՄ –

- Բացման աղօթք եւ Գիտէի՞ր (15 վայրկեան):
- Աստուածանչական պատմութիւն, Մտածենք պատմութեան մասին (10 վայրկեան):
- ճանչնանք Սուրբ Պատարագը (15 վայրկեան):
- Յիսուս կ'աղօթէ մեզի համար (10 վայրկեան):
- Կատարելիք աշխատանք մը (5 վայրկեան):
- Փակման աղօթք (5 վայրկեան):

Դարկ եղած առարկաներ –

Մատիտներ, գունաւոր ներկեր, թուղթ: Փակցնելիքներ նշաններուն համար:

«ՃԻՇԴ ՐԷ ՄԽԱԼ» վարժութեան համար երկու նշաններ, մէկուն վրայ «ՃԻՇԴ», միւսին վրայ «սխալ» գրուած:

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՉԻՒՆ ՀԱՄԱՐ

ԱՍՏՈՒԱԾԱՆՉԱԿԱՆ ԵՆՔԱՀՈՂԸ

Եթէ մեզի մէկը հարցնէ թէ Յիսուսի սորվեցուցած ամէնէն կարեւոր պատուիրը ի՞նչ է, ի՞նչ կրնանք ըստել: Քրիստոնեաները համաձայն են, թէ Յիսուս մեզի սորվեցուց նոր եւ արմատական տեսակի ստր մը, երբ խօսեցաւ մեր ընկերը սիրելու մասին: Այդ բառը՝ ընկեր, կը խորհրդանշէ իրաքանչիւր անձ, որ մեզի կը հանդիպի, եւ ոչ թէ միայն այն անձերը որոնք կը ճանչնանք եւ որոնց հետ բարեկամութիւն ունինք, եւ կամ որոնք արդէն մեր խնամքին ենթակայ են: Սակայն աւելի կարեւոր է այն, որ այս սէրը միայն կրաւորական զգացում մը

պէտք չէ ըլլայ: Յիսուս Քրիստոսի բացատրած սէրը գործնական քայլեր կը պահանջէ մեր նմանին հանեաբ բարիք գործելու: Այս օրինակը տուաւ Յիսուս իր առաքեալներուն, երբ անոնց սորվեցուց եւ պատուիրեց որ նոյնը ընեն նախքան երկինք իր համբառնալը:

Կարեւոր այլ խոստում մը զոր Յիսուս տուաւ իր առաքեալներուն, այն վստահութիւնն էր որ ներշնչեց, թէ իրենց հետ պիտի ըլլայ միշտ, նոյնիսկ երբ գինք այլեւս չտեսնէին դէմ առ դէմ: Մենք պէտք է յիշենք Յիսուսի հոգատարութիւնը իր առաքեալներուն նկատմամբ: Ան երեւցաւ իր առաքեալներուն իր յարութենէն ետք, իր սէրը յայտնեց անոնց նկատմամբ, եւ ըսաւ թէ ճշմարիտ Տիրոց ու Աստուծոյ գործն է որ կը կատարեն

իրենք: Անոնք այն ատեն գիտցան թէ Ան ծշմարտապես յարութիւն առած է ինչպէս նախապէս խոստացած էր, եւ զացին քարոզելու եւ ուսուցանելու՝ վստահութեամբ եւ հեղիանկութեամբ:

Սուրբ Պատարագը այն առիթն է, երբ քով-քովի կու գանք իրեւ Եկեղեցւոյ անդամներ, եւ զիրար կը քաջալերենք աղօթքով եւ հաւաքական պաշտամունքով:

Աշակերտներուն համար

Այս դասը առիթ կ'ընծայէ աշակերտներուն գործնապէս նտածելու ուրիշներուն օգնելու մասին, յատկապէս «Գիտի՞ր...» բաժնի վարժութեամբ: Ուղղութիւն տուեք անոնց ուրախութիւնը եւ գործին հեզասահ ընթացքը իրարու առնչելու մէջ, որու միջոցաւ աշխատանք իր աւարտին կը հասնի արդիւնաւէտ ընթացքով, եւ Յիսուս ներկայ կ'ըլլայ իրենց կեանքին մէջ:

Դասը կը շեշտ Սուրբ Պատարագի մատուցումը, իրեւ այն պահը, երբ ամենքս միասնաբար կը պաշտենք Աստուած:

Յիսուս կը խոստանայ իր ներկայութիւնը եւ ԱԱ մեզի հետ կ'ըլլայ այդ պահուն:

ԴԱՍԱ-ԱՆԴՄԱՆ ԿԱՐԳԸ

Բաժանուածութեամբ

Աշակերտներուն հետ միասին պատրաստեցէք աղօթքի ձեր անկիւնը, Աստուածաշունչը զետեղելով ծածկոցով պատուած սեղանին վրայ, մոմով եւ տօնին յատուկ պատկերով անոր կողքին: Ակսեցէք Տերունական Աղօթքով, կամ ձեր կողմէ ընտրուած որեւէ աղօթքով:

Գրտե՛ր...

Միասնաբար աշխատեցէք իրեւ գործակիցներ:

Վարժութեան առաջին բաժինը միասնաբար կարդացէք: Դասարանը բաժնեցէք երեքական կամ հինգական հոգիներով խումբերու եւ անոնց տուեք թուղթ, մատիտ եւ ներկելիք գումաւոր մատիտներ: Առիթ տուեք որ խումբերը իրենց լուծումները բերեն եւ դասարանի մնացեալ մասին հետ բաժնեն զանոնք: Նշեցէք որ իւրաքանչիր կացութեան մէջ տուեալ անձը իսկապէս կարիքը ունի ուրիշներու օգնութեան: Թող աշակերտները խօսին այնպիսի պահերու մասին, երբ իրենք կարիքի մէջ եղած են եւ օգնութիւն ստացած, եւ թէ ասիկա ինչքան կարեւոր էր, որ կարենային իրենց այդ հարցը լուծել եւ այդ կացութենեն դուրս գալ:

Վատուածնաշական Պատմութեան

Աշակերտները թող նային երկու նկարներուն, եւ հատուածը կարդալէ ետք անոնց հարցուցէք. «Ի՞նչ նոյնութիւն կը տեսնէք այս երկու նկարներուն մէջ»: Երկրորդ պարբերութեան բացատրութեան պարագային, օգնեցէք աշակերտներուն որպէսզի տեսնեն թէ, Յիսուսի խոստումին համաձայն, ուր որ երկու կամ երեք հոգիներ հաւաքուին իր անունով, ինք ներկայ պիտի ըլլայ այնտեղ: Ըսէք. «Այսօրուան պատմութիւնը մեզի կը ներկայացնէ Յիսուսի խոստումը, թէ ԱԱ իր հետեւրդներուն հետ պիտի ըլլայ միշտ»: Միասնաբար կարդացէք Աստուածաշնչական պատմութիւնը: Յարցուցէք. «Ի՞նչ ձեւերով Յիսուսի հետեւրդները ցոյց տուին, թէ իրենք իրարու բարեկամներ են: Յանկ մը պատրաստեցէք իրենց կատարածներուն, որով ցոյց տուին այդ բարեկամութիւնը»:

Հոգեւոր բառարաւ

Իմ անունովս հաւաքուիլ: Երբ մարդիկ հաւաքուին, որովհետեւ կը սիրեն Յիսուսը եւ կ'ուզեն ծառայել Անոր եւ պաշտել զլյան, անոնք ԻՐ ԱՆՈՒՆՈՎ ՅԱՒԱՔ-ՈՒԱԾ կ'ըլլան. անոնք հաւաքուած կ'ըլլան Անոր համար:

Աշակերտներէն ոնանց առիթ տուեք որ բառարանին այս բացատրութիւնը իրենց բառերով ներկայացընեն:

Ուսկեած Հնարաւ

Մատթեոս 18.20: «Ուր որ երկու կամ երեք հոգի հաւաքուին իմ անունովս, ես հոն եմ՝ անոնց միշեն»:

Գոց սորվեցուցէք այս Ուսկեայ Յամարը, եւ կամ զայն օգտագործեցէք փակման աղօթքի ընթացքին:

Պատմութեան Վերաբառու

Ստածենք այս մասին

ճշգրիտ հերթականութիւնը պատասխանին հետեւեալն է. – **η, ρ, φ, w, q, t:** Առիթ տուեք աշակերտներուն որ իրենց պատասխանները տան երկրորդ հարցումին:

Նայեցէք Յիսուսի եւ իր աշակերտներուն եւ հետեւրդներուն նկարին: Դասարանին յիշեցուցէք, թէ Յիսուս Քրիստոս մեր Տերն ու Փրկիչն է, եւ դեռ ԱԱ իր աշակերտներուն ըսաւ. «Ես ձեզ բարեկամներ կոչեցի»: ԱԱ մեզի հոգ կը տանի բարեկամի մը պէս: Յարցուցէք աշակերտներուն թէ պատահա՞ծ է որ իրենց կեանքին մէջ Յիսուսի ներկայութիւնը զգացած ըլլան: Եթէ խօսիլ փափաքող ըլլայ, իրենց գիրքին մէջ արձանագրեցէք անոնց ունեցած փորձառութիւնը:

ԿԵՆԱՔԸ՝ ԵԿԵՂԵՅԻՑ ՄԵԶ

ՃԱՆՉԱՎԱՐ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԸ

Կարդացէք այն անձերուն մասին, որոնք մաս կը լազմեն Սուրբ Պատարագին: (Եիշղ պատասխանները դրուած են): Իւրաքանչիւր աշակերտ այդ անձերուն կատարածը թող ծիշղ իր տեղը դնէ հաւկթածեւ բոլորակներուն մէջ, նոյն էջին վլայ:

- Կ'երգէ (քահանայ, սարկաւագ, դպրաց դաս, հաւատացեալներ):
- Սուրբ Յաղորդութիւն կու տայ (քահանայ):
- Խորանին վրայ քահանային կ'օգնէ (սարկաւագ):
- Աւետարանը կը կարդայ (քահանայ եւ կամ սարկաւագ):
- Առաքելական նամակը կը կարդայ (սարկաւագ):
- Սուրբ Յաղորդութիւն կը ստանայ (քահանայ, սարկաւագ, դպրաց դաս եւ հաւատացեալներ):
- Աստուծոյ շնորհակալութիւն կը յայտնէ (քահանայ, սարկաւագ, դպրաց դաս եւ հաւատացեալներ):
- Քահանային կամ սարկաւագին երգեցողութեան կը պատասխանէ (դպրաց դաս եւ հաւատացեալներ):

Միասնաբար անցէք պատասխաններուն վրայէն: Շեշտեցէք այն գաղափարը, թէ Սուրբ Պատարագը այն պահին է եղը բոլորը ներկայ պէտք է ըլլան ու իրենց պարտականութիւնները կատարեն: Ինչպէս մեր առօրեայ կեանքի ընթացքին, նոյնպէս ալ Սուրբ Պատարագի ժամանակ պէտք է միասին ըլլանք եւ միասնաբար աղօթենք:

ԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՄԱՐ

ԹԻՇԴ ԹԵ ՄԽԱԼ

Թիշդ եւ ՄԽԱԼ ցուցանակները որեք դասարանին մէջ անկիւն մը, ուր կրնան հաւաքուիլ աշակերտները խմբովին:

Աշակերտները դարձեալ իրենց խումբերուն մէջ թող ըլլան: Կարդացէք երկու ցուցանակները: Թող խումբերը իրենց տեսակետը արտայայտեն, ըսելով թէ ճիշդ է կամ սխալ: Անոնք միասնաբար «ճիշդ» կամ

«Սխալ» ցուցանակին քով պէտք է երթան, համաձայն իրենց կատարած ընտրութեան: Երբ աւարտեն, միասնաբար մտածեցէք հետեւեալ հարցումներուն մասին.-

- Դժուա՞՞ր էր այս հարցումներուն մասին միասնական տեսակետ ունենալը:
- Ի՞նչ բան կը դժուարացնէ միասնական որոշում առնելու պարագային, քան առանձնաբար տեսակետ ունենալը:

ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ

- Միայն քահանան կրնայ Սուրբ Յաղորդութիւն ստանալ (սխալ):
- Եկեղեցւոյ մէջ գտնուող իւրաքանչիւր անձ կրնայ շարականները երգել (ճիշդ):
- Ամէն Սուրբ Պատարագի ընթացքին Սուրբ Յաղորդութիւն կը տրուի (ճիշդ):
- «Ամէն» բառը կը նշանակէ «այո», եւ կամ «թող այդպէս ըլլայ» (ճիշդ):
- Դպրաց դասը եւ հաւատացեալները բնաւ չեն ըսեր «Տէր, ողորմեա», ատիկա միայն սարկաւագը կ'ըսէ (սխալ):
- Առաքեալները միայն իրենք իրենց աղօթեցին, եւ ոչ թէ հաւատացեալներուն հետ (սխալ – անոնք հաւատացեալներուն հետ ալ աղօթեցին):

Միասնաբար անցէք պատասխաններուն վրայէն:

ՅԵՍՈՒ Կ'ԱՌՈՅԷ ՄԵԶԻ ՀԱՄԱՐ

Կարդացէք եւ քննարկեցէք այս հատուածը: Իւրարու խառնուած բառերը, որոնք նոր Կտակարանէն համար մը կը ներկայացնեն, հետեւեալն է.-

Ես կը խնդրեմ որ անոնք ամէնքը մէկ ըլլան: Ինչպէս Դուն, Յայր, իմ մէջս ես, եւ ես Քու մէջդ, թող անոնք ալ մէր մէջ ըլլան:

ՀԱՏՄԱԿԵՐԻՒ ԱՍԴԱՄՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Քաջալերեցէք որ աշակերտները այս հատուածին առաջարկուած պարտականութիւնները կատարեն:

ՓԱԿՄԱՆ ԱՌՈՅՔ

Դասապահը եղրափակեցէք Տէրունական Աղօքքով:

Դաս 4 – ԵԿԵՂԵՑԻՆ ԿԸ ՏԱՐԱԾԵ ՅԻՍՈՒՄԻ ԱՒՏԱՐԱՆԸ

Բնաբան – Յիսուս Քրիստոսի հանդեպ ունեցած իրենց սէրը եւ Սուրբ Հոգիին տուած ներշնչումը, դիրացուցին առաքեալներուն Աւտուարանի քարոզչական աշխատանքը:

Աստուածաշունչ – Ղուկաս 4.16-22, Գործը Առաքելոց 2.14-41:

Ոսկեայ Համար – Աստուած կ'ըսէ. Այնուիետեւ, երբ վերջին օրերը գան, իմ Հոգիս պիտի թափեմ բոլոր մարդոց վրայ (Գործը Առաքելոց 2.17):

Ընկալումներ – Աշակերտները պէտք է կարենան.–

1. Գիտնալ, թէ Սուրբ Հոգին Յիսուս Քրիստոսի հետ ըլլալով, Ան խոստացաւ իր հետեւորդներուն ըսելով թէ Հոգին պիտի ներշնչէ, օգնէ ու առաջնորդէ գիրենք:
2. Աստուածաշունչի օրինակներով ցոյց տալ քանի մը կերպեր, որոնց միջոցաւ Սուրբ Հոգին կը ներշնչէ ու կ'օգնէ մեզի:
3. Գիտնալ թէ Սուրբ Հոգին Եկեղեցւոյ անդամներուն հետ էր Սուրբ Աթանասի ապրած օրերուն, ինչպէս որ մեզի հետ է այսօր:

Զեւալորում –

- Բացման աղօթք եւ Գիտի՞ր (15 վայրկեան):
- Աստուածաշնչական պատմութիւն, Հեռատեսիլի հարցազրոյց, Պատասխանները գըտնել (15 վայրկեան):
- Սուրբ Հոգին մեզի հետ է (15 վայրկեան):
- Մեծն Սուրբ Աթանաս (10 վայրկեան):
- Փակման աղօթք (5 վայրկեան):

Դարկ եղած առարկաներ –

- Գիտի՞ր...** բաժնի վարժութեան համար հետեւեալները պէտք պիտի ունենաք.–
- Փոքրիկ փայլուն տուփ մը, փայլուն թուղթով պատուած, կամ փոքրիկ այլ առարկայ մը, դարձեալ փայլուն, որպէսզի երբ գտնուի, շուտով նշմարուի:
 - Աստուածաշունչեր:
 - Խաղալիք բարձրախօս մը, կամ այնպիսի առարկայ մը որ բարձրախօսի նմանութիւն ունենայ (գրիչ մը կամ լուսարձակ մը):
 - Քարտէս մը, որուն վրայ կարելի ըլլայ ցոյց տալ Եգիպտոսն ու Աղեքսանդրիա քաղաքը:

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՅՈՒՆ ՀԱՄԱՐ

Աստուածաշնչական Ենթահողը

Յիսուս Քրիստոս աղօթեց եւ քարոզեց ժողովարանին մէջ: Սակայն իր պատգամը նորութիւն էր: Ան ժողովուրդին ըսաւ, թէ ինք անձնապէս ամբողջացուց այն մարգարեւութիւնը զոր Եսայիի գիրքէն կարդաց իրենց: Սուրբ Հոգիին զօրութեամբ Յիսուս պիտի ազատեր գերեվարուած հոգիները, կոյրերուն տեսողութիւն պիտի շնորհէր, եւ պիտի յայտարարէր իր Յօր ներկայութիւնը

իր ժողովուրդին մէջ: Յայրը, Որդին եւ Սուրբ Հոգին միասնաբար կ'աշխատէին այս աշխարհի բարիքին համար:

Գործը Առաքելոց գիրքէն քաղուած ընթերցումը, ուր Պետրոս առաքեալ կը խօսի բազմութեան, կը նկարագրէ թէ ինչպէս նոյն Սուրբ Հոգին, որուն մասին մարգարեւած էր Յին Կտակարանի Յովել մարգարէն, նորակազմ Եկեղեցւոյ անդամներուն միջոցաւ կը գործէր: Պետրոս առաքեալ կ'ըսէ թէ ինչպէս Յիսուս ամբողջացուց մարգարեւութիւնները, ներառեալ Դաւիթ թագաւոր

Իին կատարածը: Պետրոս կը յիշեցնէ ժողովուրդին Յիսուսի մահուան ու յարութեան մասին, ինչպէս նաև Երկայիս Անոր բնակութեան Վայրին մասին՝ Երկինքի մէջ, Յօր եւ Սուլը Յոգիին հետ:

Պետրոս առաքեալ կը քալեդարէ իր ունկնդիրներուն դարձի գալ, խոստովանիլ իրենց մեղքերը, մկրտը լիլ եւ ստանալ Սուլը Յոգիոյ շնորհները, որ խոստացուած է իւրաքանչիւր հաւատացեալի:

Աշակերտներուն համար

Առաքեալները երբ Աւետարանը քարոզելու պարտականութեան դիմաց գտան իրենք զիրենք, մասնաւանդ որ այլեւս Յիսուս անձնապէս չկար իրենց հետ, այնպիսի կացութեան մէջ գտնուեցան, որ շատ նման է Երեխաններու այն կացութեան, երբ առանձին կը գտնեն իրենք զիրենք դժուարութեան մը դիմաց: Երկութիւն պարագային ալ Ենթականները օժանդակութեան կարիք ունին: Այնպէս ինչպէս Տերը խոստացաւ Սուլը Յոգին դրկել որպէսզի առաջնորդէ զիրենք, մասնուկները պէտք է գիտնան թէ իրենց ծնողները, հոգեւոր հայրերը եւ ուսուցիչները պիտի առաջնորդն զիրենք: Սակայն անոնք պէտք է նաև գիտնան, որ նոյն Սուլը Յոգին կը շարունակէ առաջնորդն բոլոր անոնք, որոնք կը հետեւին Յիսուսի:

ԴԱՍԱՌԱՆԴՄԱՆ ԿԱՐԳԸ

Բաժանա սղօրթ

«Յօգի Աստուծոյ, Աստուած ծշմարիտ, որ Յորդանան գետին վրայ եւ վերնատունը հջար, եւ զիս լուսաւորեցիր սուլը աւազանին մկրտութեամբ. մեղանչեցի Երկինքին դէմ՝ քու առջեւէ. Վերստին մաքրէ զիս քու աստուածային կրակովդ, ինչպէս իրեղէն լեզուներով մաքրեցիր սուլը առաքեաները. եւ ողորմէ՝ քու արարածներուդ եւ ինծի՝ բազմամեղիս, Ամէն»:

ԳՐՏԵՒՐ...

Աշակերտներուն հետ խաղացէք հետեւեալ խաղը: Իրենցմէ մէկուն աչքերը կապեցէք եւ ուրիշ նը թոյ պահէ փայլուն տուփի կամ փայլուն առարկայ մը՝ այնպիսի տեղ մը, ուր միւս աշակերտները բոլորը տեսնեն: Աչքերը բանալէ ետք, աշակերտը պիտի փնտուէ զանիկա, մինչ միւսները բացարձակ լուսութեամբ պիտի հետեւին: Ապա, քանի նը վայրկեան վերջ, դասարանին ըսէք որ օգնեն «մօսեցա՞ր», «հեռացա՞ր» ըսէլով, երբ մօտենայ կամ հեռանայ այդ պահուած տեղին:

Աշակերտներուն ըսէք որ մտածեն հետեւեալ հարցումներուն մասին.-

1. Ի՞նչ պիտի զգային, երբ իրենք տուփը փընտուին եւ իրենց դասընկերները, որոնք գիտեն անոր տեղը, լուր մնային:
2. Ի՞նչ փոփոխութիւն կը զգան, երբ իրենց դասընկերները օգնեն իրենց այդ տուփը գտնելու աշխատանքին մէջ:

Իրենց գրասեղաններուն շուրջ երթալով, օգնեցէք անոնց **Գիտի՞ր...** բաժնի աշխատանքին: Ապա կըրնաք հարցնել. «Ե՞րբ պէտք ունեցած էք օգնութեան եւ ձեր ծնողը, հոգեւոր հովիւր կամ ուսուցիչը օգնած են ձեզի»: «Այդ օգնութիւնը ինչպէ՞ս լուծած է ձեր հարցը»:

Թող Սաղմոս 50-ի պարտականութիւնը կատարեն առանձնաբար: Ամէնէն կարեւոր նախադասութիւնը Սաղմոս 50-ին մէջ «Լուր մնալ»ն է: Աստուած լուր պիտի չմնայ ու մեզ առանձին պիտի չձգէ, երբ մենք վստահինք իրեն ու օգնութիւն հայցենք:

ՎԱՏՈՒԽԾԱՉԱԿԱՆ ՊԱՏԱՌԻԹԻՒ

Պատմութիւնը ներկայացնուցէք, աշակերտներուն ըսէլով որ բացարութեան նային: Յոգեւոր բառարանը միասնաբար սերտեցէք, եւ ապա միասնաբար կարդացէք պատմութիւնը: Կարդացած ժամանակ կըրնաք հարցումներ հարցնել, զիրենք մթնոլորտին մէջ առնելու համար: «Ինչո՞ւ համար անոնք Յիսուսն խնդրեցին որ կարդայ»: Աշակերտներուն պատասխանը մտիկ ըրեք, իսկ եթէ պատասխան չունենան, աւելցուցէք ըսէլով. «Յորեայ մարդոցմէ անոնք որոնք կարդալ գիտին, անոնց կը տրուէր կարդալ Սուլը Գիրքը»: Երկրորդ պարբերութեան աւարտին կրնաք հարցնել. «Եսայիի համաձայն, ամէնէն կարեւոր գործը զոր պիտի կատարէր Աստուծոյ Ընտրեալը՝ ի՞նչ էր»:

Հոգեւոր բարարս

ԺՈՂՈՎԱՐԱԾ՝ տուն մը, ուր իրեաներ կը հաւաքուին աղօթելու համար:

ՕՇՈՒՄ՝ նշանակել մէկը, որ Աստուծոյ կողմէ պարտականութիւն մը ստանձնած է: ՕՇՈՒՄ կը կատարուի ընդհանրապէս մէկու մը գլխուն վրայ օրինըւած իւղ թափելով կամ զայն օժելով այդ իւղով:

ՈՍԿԵԱՅ ՀԱՄԱՐ

Գործը Առաքելոց 2.17: «Աստուած կ'ըսէ. Այնու-

հետեւ, երբ վերջին օրերը գան, իմ Հոգիս պիտի թափեմ բոլոր մարդոց վրայ»:

Գոց սորվեցուցէք այս Ռոկեայ Համարը եւ հարցուցէք. «Որո՞ւն վրայ թափուեցաւ Աստուծոյ Հոգին պատմութեան մէջ»:

Պատմութեան Վերսաղոր

Դեռատեսիլի հարցազրոյց մը

Աշակերտները թող իրենց հարցումները գրեն, եւ ապա զոյգ-զոյգ դերակատար թող ըլլան հարցազրոյց վարելու եւ հարցումներու պատասխաննելու պաշտօններով: Կրնան բարձրախօսը գործածել, ինչպէս կ'ընեն թրակիցներ:

Պատասխանները գտնել

Աշակերտները զոյգ-զոյգ թող կատարեն այս պարտականութիւնը, ապա անոնց պատասխանները ըստք նաեւ ամբողջ դասարանին:

Պատասխանները հետեւեալներն են.—

1/q, 2/p, 3/w, 4/t, 5/n

Կեսար՝ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԷԶ

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՄԵԶԻ ՀԵՏ

Մանուկ մը կամ չափահաս մը երբ ջուրով կը մկրտուի, անկէ ետք «Վը կնքուի» Սուրբ Հոգինվ, սրբալոյս Միւռոնի օծում ստանալով, նման այն օծումներուն, որ կը ստանային Հին Կտակարանի թագաւորները: Պատմութեան ընթացքին հայոց արքաներն ալ օծում ստացած են, իսկ մինչեւ այսօր հոգեւորականները եւս իրենց ծեռնադրութեան ընթացքին, մինչեւ Կաթողիկոս, սրբալոյս Միւռոնի օծում կը ստանան:

Հոգեգալուստի օրը, Պետրոս առաքեալ մէջբերեց Յովելի մարգարեւորիւնը, որ նոր տեսակի օծնան մը մասին է: Յովել կ'ըսէ. «Ես իմ Հոգիս պիտի թափեն ամբողջ մարդկութեան վրայ»: Օծումը ուրեմն այլեւս բոլոր հաւատացեալներուն համար էր, եւ այդ պատճառով մենք ալ զայն կը ստանանք Ակրտութեան ընթացքին: Մկրտութիւնը նոր ծնունդ մըն է, իսկ սրբալոյս Միւռոնվ օծումը՝ Սուրբ Հոգիւն գօրութիւնն ու ոյժը ստանալը կը խորհրդանշէ:

Աշակերտներուն ուշադրութիւնը հրաւիրեցէք այն նկարին, ուր քահանային ծեռքը պատրաստ է օծում կատարելու: Հարցուցէք աշակերտներուն. «Ինչ պիտի՝ մարդիկ կ'օծուին Յիսուսէ առաջ (թագաւորներ, պանակի հրամանատարներ, Աստուծոյ համար աշխատողներ): Ապա հարցուցէք. «Որո՞ւն օծումը կատարելու կը պատրաստուի քահանան (շեշտուելիք կէտը այն է, որ մկրտուուր անձը, կամ այն որ Աստուծոյ կողմէ յատուկ պաշտօնի կը կոչուի, օծում կը ստանայ Եկեղեցւոյ կողմէ):

Միասնաբար կարդացէք Մկրտութեալն ետք տեղի ունեցող դրոշմի արարողութեան մասին: Դարձեալ նայեցէք նկարին, ուր քահանան դրոշմ կը կատարէ:

Վարժութեան մէջի համարը հետեւեալն է. «Ան իր կնիքը դրաւ մեր վրայ եւ մեզի տուաւ իր Հոգին մեր սրտերուն մէջ, իբրև ապաւէն»: Աշակերտներուն յիշեցուցէք Սաղմոն 50-ի համարը, որ դրուած է այս դասի սկզբնաւորութեան,— գաղափարը միեւնոյնն է՝ թէ Աստուած մեզ պիտի չլքէ, եւ իր խոստումները պիտի յարգէ: Ան է որ «կու գայ» եւ Ան է որ մեզի կու տայ փրկութեան խոստումը Սուրբ Հոգին միջոցաւ:

«Հոգի Աստուծոյ, Աստուած Ծննարիտ» աղօթքին բառերը վերաքաղ ըրէք:

ՄԵԾԱ ՍՈՒՐԲ ԱԹԵԱՍԱՍ

Ծանօթացէք Սուրբ Աթանասի պատմութեան, քարտսի վրայ ցոյց տալով Աղեքսանդրիան: Աշակերտներուն քացատրեցէք, որ Աղեքսանդրիան Ժամանակին իհն աշխարհի կարեւոր մշակութային կեղրոններէն մէկն էր: Թոյլ տուէք որ պատասխաննեն ձեր տըւած հարցումներուն: Ըսէք որ Սուրբ Հոգին քաջութիւն եւ յոյս տուաւ այս սուրբին, երբ ան կը պաշտպանէք քրիստոնէական ուղղափառ հաւատքը գօրաւոր հակառակորդներու դիմաց: Երգեցէք կամ արտասանեցէք շարականին տունը: Եկեղեցական գրականութեան մէջ Հոգին անձրեւի եւս կը ննանցուի: Հարցուցէք. «Տակաւին ինչը՝ կրնանք ննանցնել Հոգին, որուն մասին արդէն որոշ քաներ սորված ենք»: (Հոգեգալուստի օրը Հոգին Եկաւ գօրաւոր քամիի եւ կրակի տեսքով): Բացատրեցէք, որ այս բնորոշումները պարզապէս փոխաբերական ննանութիւններ են, քանի որ Հոգին՝ հոգի է, եւ ոչ թէ հով, կրակ կամ անձրեւ: Պարզապէս Հոգին կ'երեւի այս ծեւերով:


ՀԱՏԱԿԱՐԵՒ ԱՆԴԱՄԱՆԵՐՈՒ ՀԵՏ

Քաջալերեցէք աշակերտները, որ պարտականութիւնները տան մէջ ամբողջացնեն:

ՓԱԿԱՄԱՆ ՄՈՈԹ

Դասապահը եզրափակեցէք Տերունական Աղօթքով:

Ասուարի գծակարին նյութը



Դաս 5 – ՊԻՏԻ ՅԱՅՏԱՐԱՐԵՆՔ ԱՄԷՆ ՏԵՂ

Բնաբան – Նույիրաբերման ոգին, զոր առաքեալները ցուցաբերեցին իրենց Տիրոջ նկատմամբ, նեղ նաեւ կրնայ մղել բարեգործութիւն կատարելու մեր նմաններուն:

Աստուածաշունչ – Գործք Առաքելոց 3.1-10, 11-26, 4.1-31, 5.12-42

Ոսկեայ Դամար – Ամէն օր, թէ տաճարին եւ թէ իրենց տուներուն մէջ, անդադար կը սորվեցնէին, Յիսուս Քրիստոսը քարոզելով իբրեւ Փրկիչ (Գործք Առաքելոց 5.42):

Ընկալումներ – Աշակերտները պէտք է կարենան.-

1. Գիտնալ թէ նախանձը դժուարութիւններ կրնայ յարուցանել մեր կեանքին մէջ, այնպէս ինչպէս պատահեցաւ առաքեալներուն:
2. Ս. Կողմասի եւ Ս. Դամիանոսի կատարած բժշկութիւնները առնչել առաքեալներուն կատարածին հետ:
3. Բացատրել թէ ինչպէս Եկեղեցին այսօր կը շարունակէ տակաւին բժշկութեան եւ աղօքքի իր առաքելութիւնը:

Զեւատրում –

- Բացման աղօքք եւ Գիտեհ՝ (15 վայրկեան):
- Աստուածաշնչական պատմութիւն, Մտածենք պատմութեան մասին (15 վայրկեան):
- Անարծաք բժիշկներ՝ Կողմաս եւ Դամիանոս (15 վայրկեան):
- Բժշկութեան աղօքքներ (10 վայրկեան):
- Փակման աղօքք (5 վայրկեան):

Դարկ եղած առարկաներ –

Գիտեհ... բաժնի բատերական ներկայացնան համար շատ պարզ զգեստաւորումներ եւ գլխու ծածկոյթներ պէտք ունիք, ինչպէս՝ երկար տարագններ եւ գլուխը ծածկելու լաթեր:

Բժշկութեան աղօքքներ բաժնի պարտականութեան համար, հաստ խաւաքարտ մը կտրեցք զանազան ձեւերով, որպէսզի կազմապատկեր մը (փազզլ) կազմէք: Իւրաքանչիւր աշակերտի կտրո մը պէտք է հասնի: Կրնաք մէկէ աւելի կազմապատկերներ պատրաստել, եթէ դասարանը աւելի մեծաթիւ է: Մատիտներ եւ գունաւոր ներկեր, ինչպէս նաեւ փակցնելիք ունեցեք:

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՉԻՒՆ ՀԱՄԱՐ

Աստուածաշնչական Ենթահողը

Դամարները ցոյց կու տան, թէ առաքեալներուն վստահութիւնը թէ Տէրը զիրենք կ'առաջնորդէ միշտ, բժշկելու կարողութիւն տուաւ անոնց, ինչպէս նաեւ համարձակ քարոզելու քաջութիւն, որպէսզի բացատրեն թէ ինչպէս Յիսուս ամբողջացուց Յին Կտակարանի գործիւնները: Ուրիշներու նախանձը, որոնք զինք իրեւն Սեսիա ըննդունեցին, կը նշանակէր թէ առաքեալներն ալ կրնային ընդդիմութեան հանդիպիլ ու հալածուիլ:

Աշակերտներուն համար

Մեր աշակերտները, թեւ փոքրիկ, սակայն շատ հաւանաբար նախանձի փորձառութիւնը ունեցած ըլլան: Երբ յաջողութիւն մը ունեցած ըլլան, կամ իրենք զիրենք նպատակի մը նույիրած ըլլան, վստահաբար հակառակութեան կամ թշնամական վերաբերումի հանդիպած ըլլան:

Այս դասը առիթ կու տայ աշակերտներուն, որպէսզի անդրադառնան որ առաքեալներն ալ նման կացութեան մէջ եղած են, եւ սակայն շարունակած են այն առաքելութիւնը որուն կոչած եր զիրենք Աստուած: Անոնք բնաւ չյուսահատեցան եւ չընկուկեցան: Անոնք

պայքարեցան Աստուծոյ նկատմամբ իրենց ունեցած հաւատքը զօրացնելու, եւ այդ հաւատքն էր որ իրենց տուաւ կարողութիւն՝ շարունակելու իրենց գործը: Անոնք կարողացան ծառայել ուրիշներուն՝ բժշկելով, քարոզելով եւ աղօթելով:

Դասը նաեւ աշակերտներուն ցոյց կու տայ, թէ Եկեղեցին այսօր ինչպէ՞ս կը շարունակէ տակալին բժշկութեան ու աղօթքի իր առաքելութիւնը, եւ թէ իրենք ալ ինչպէ՞ս կրնան մասնակից դառնալ անոր:

Ս. Կոզման եւ Ս. Դամիանոս Եղբայրներուն կեանքը կրնայ տիպար օրինակ մը ըլլալ Երիտասարդներուն համար: Ներկայ աշխարհիս մէջ, ուր դրամն ու նիւթապէս վարձատրուիլը այնքան կարեւոր տեղ կը գրաւեն, այս սուրբերուն կեանքը բոլորովին տարբեր օրինակ կրնայ ծառայել աշակերտներուն, որ իսկական քրիստոնէական գործելածեւը ցոյց կու տայ:

ԴԱՍԱՌԱՄԱՆ ԿԱՐԳԸ

Բնասան սուօթք

«Յոդի Աստուծոյ, Աստուած ծշմարիտ, որ Յորդանան գետին վրայ եւ վերնատունը իջար, եւ զիս լուսաւորեցիր սուրբ աւազանին մկրտութեամբ. մեղանչեցի Երկինքին դէս՝ քու արջեւու. Վերստին մաքրէ զիս քու աստուածային կրակով, ինչպէս իրեղէն լեզուներով մաքրեցիր սուրբ առաքեալները. եւ ողորմէ քու արարածներուու եւ ինծի՝ բազմամեղիս, Ամէն»:

Գրտեր...

Ներերը նշանակեցէք եւ սորվեցուցէք անոնց: Օգնեցէք աշակերտներուն, որ անդրադառնան, թէ հակառակ անոր որ կերպարները միասին կ'աշխատին, սակայն նախանձ գոյութիւն ունի անոնց միջեւ:

Նախապատրաստեցէք աշակերտները Աստուածաշնչական պատմութեան, ըսելով անոնց, թէ առաքեալները նույրուած էին այն աշխատանքին, զոր Յիսուս Քրիստոս յանձնած էր իրենց որպէսզի կատարեն: Սակայն անոնք ունեցան նախանձ եւ թշնամանք իրարու նկատմամբ: Բայց իրենց հաւատքը զիրենք զօրացուց եւ կարող դարձուց ուրիշներուն օգտակար հանդիսանալու:

Աստուածաւասկան դաստիթիւն

Աշակերտները բացատրութեան թող նային եւ ըսեն թէ ի՞նչ կը խորիին ներկայացուածին մասին: Ապա կարդալէ ետք պատմութիւնը, զրուցեցէք անոր մասին: Զրոյցը վարելու համար, կրնաք հետեւեալ հարցումները հարցնել անոնց.–

1. Պետրոս առաքեալ ինչի՞ կ'ակնարկէր, երբ կ'ըսէր «Ինչ որ ունին, ատիկա կու տամ քեզի»:
2. Կը թուի թէ Պետրոս առաքեալ քաջօրէն կը խօսէր երբ կ'ըսէր. «Չենք կրնար չխօսիլ մեր տեսածներուն ու լսածներուն մասին»: Ուրեմն ինչո՞ւ կը կարդանք որ անոնք կ'աղօթէին որ Աստուած զօրացնէ զիրենք շարունակելու քարոզութիւնները եւ բժշկութիւնները: (Փորձեցէք բացատրել որ դժուարութեանց մէջ անպայման մեր բարեկամներուն ու ընկերներուն զօրակցութիւնը կը փնտռենք, մանաւանդ աղօթքի ծամբով):
3. Ի՞նչ կը խորիիք Գամադիէլի ըսածին մասին: Կը կարծէ՞ք թէ ան կը հաւատար առաքեալներուն կատարած քարոզութեան: (Աշակերտները կրնան տարբեր կարծիքներ արտայատել: Ամփոփեցէք զանոնք, եւ փորձեցէք ըսել թէ թերեւս Աստուծոյ կողմէ առաջնորդուած ըսաւ ան այդ խօսքերը):

Հոգեւոր բարարան

Տաճարի իշխանաւորմեր: Ասոնք քահանաներն էին, որոնք տաճարին պատասխանատու կարգուած էին: Անոնք կոչուած են յաճախ «քահանայապետներ» եւ «ծերեր»:

Ուսեսաձ Հսմար

Գործք Առաքելոց 5.42: «Ամէն օր, թէ տաճարին եւ թէ իրենց տուներուն մէջ, անդադար կը սորվեցնէին, Յիսուս Քրիստոսը քարոզելով իրեւ Փրկիչ»:

Գոյն սորվեցուցէք այս Ուսեայ Յամարը, եւ կամ զայն օգտագործեցէք փակման աղօթքի ընթացքին:

Պատյուհեան Վերսքարոր

Սուածնք պատմութեան մասին բաժնի թատերական ներկայացման բաժնի ընթացքին, քաջալերեցէք աշակերտները որ Երկխօսութիւն մը գրեն, ցոյց տալով թէ իրենց ստանձնած դերը ինչպէ՞ս կ'ամորադառնայ բժշկութեան հրաշքին: Նաեւ քաջալերեցէք զանոնք որպէսզի Երկխօսութիւն մը գրեն, որ ցոյց տայ թէ տաճարի իշխանաւորները ի՞նչ մտածեցին երբ լսեցին այդ հրաշքին մասին, եւ ի՞նչ ծրագրեցին ընել: Ապա կրնան իրենց գրած Երկխօսութիւնը թատերականորէն ներկայացնել:

**ԱՆԱՐԾԱԹ ԲԺԻՇԿՆԵՐ՝
ԿՈՉԱՍՍ ԵՒ ԴԱՄԻՎՆՈՍ**

Աշակերտները թող ծանօթանան պատմութեան, հերքաբար կարդալով թիւ ունեցող իւրաքանչիւր պարբերութիւնը: Աշակերտներուն պատուիրեցէք մտածել Մատթեոսի Աւետարանի 10-րդ գլուխի բովանդակութեան մասին: Մատնանշեցէք, որ մենք ձրի կեանք ու հնարաւորութիւն պիտի ունենանք Աստուծոյ արքայութեան մէջ: Ուստի մենք ալ պէտք է ուրիշներուն բարիք զնենք, առանց փոխարէն մեծ գումարներ պահանջելու: Անշուշտ ասիկա չի նշանակեր թէ մենք մեր ապրուստ պէտք չէ հոգանք: Այլ կը նշանակէ նաեւ, թէ մենք պէտք է օգնենք ուրիշներուն, աղօթենք անոնց համար, առանց անոնցն փոխարէն պահանջելու:

Գրատախտակին վրայ գրեցէք Ղուկասու Աւետարանին 6-րդ գլխու 35-րդ համարը, գժիկներ դնելով բաց ձգուած բառերուն տեղ:

«Բայց դուք _____ ծեր թշնամիները եւ _____ ըրէք ծեզ ատողներուն ու փոխ տուէք անոր, որմէ ետ առնելու _____ չունիք»:

Վարը գրեցէք հետեւեալ բառերը. **բարիք, ակնկալիք, սիրեցէք:** Աշակերտները հերքաբար թող ամբողջացնեն բաց ձգուած տեղերը, բառերը իրենց ճիշդ տեղը դնելով:

Միասնաբար սրբագրեցէք Աւետարանի յիշեալ համարը, որուն ճիշդ ծեւը հետեւեալն է. «Բայց դուք սիրեցէք ծեր թշնամիները եւ բարիք ըրէք ծեզ ատողներուն ու փոխ տուէք անոր, որմէ ետ առնելու ակնկալիք չունիք»:

Ապա, աշակերտներուն հարցուցէք, թէ կը ճանչնա՞ն այնպիսի մարդիկ, որոնց բարիք կ'ընեն, եւ գի-

տեն որ անոնք չեն կրնար իրենց փոխադարձել: Պատասխանները կրնան տարբերիլ:

ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ԱՊՈԹՔՆԵՐ

Միասնաբար կարդացէք հատուածը:

Հարցուցէք. «Երբեք նշանարա՞ծ էք Աստուծոյ բժշկաբար օգորութեան ներկայութիւնը»: Յետեւեալ բառերը գրեցէք գրատախտակին վրայ. Աւելի լաւ զգալ, ցաւը անցընել, հիւանդանոցէն տուն վերադառնալ, աւելի ուրախ երեւիլ: Հարցուցէք աշակերտներուն թէ այս խօսքերը, որ ուրիշներուն համար կ'ըսենք յածախ, ինչպէս Աստուծոյ սիրոյն եւ բժշկութեան նշանները կ'ըլլան:

Իւրաքանչիւր աշակերտի տուէք կազմապատկերն մասնիկ մը, եւ թող հետեւին աշակերտական գիրքի ցուցմունքներուն: «Օգնելու» կարելիութիւններ առաջարկեցէք. մեծ աշխատանքի մը կրնան օգտակար հանդիսանալ, հիւանդ մը կրնան ուրախացնել, եւայլն: Շեշտեցէք որ ուրիշներու համար աղօթեն ալ աշխատանք մըն է:


Թող աշակերտները մտածեն ու լուծեն իրենց կազմապատկերին կերպ միասնաբար: Պատին վրայ դնելու մասին մտածեցէք, անոր վրայ գրելով թէ աշակերտներուն կողմէ պատրաստուած է:

ԸՆՏԱՐՁԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՀԵՏ

Քաջակերեցէք աշակերտները, որ պարտականութիւնները տան մէջ ամբողջացնեն:

ՓԱԿՄԱՆ ԱՊՈԹՔ

Դասապահը եզրափակեցէք Տէրունական Աղօթքով:



Դաս 6 – ՍՏԵՓԱՆՈՍ՝ ԱՌԱՋԻՆ ՍԱՐԿԱՒԱԳԸ

Բնաբան – Եկեղեցւոյ թիւին բազմացման հետ, պէտք է նաեւ ծառայողներուն թիւը աւելնար:

Սարկաւագներ ընտրուեցան այդ օրերուն: Այսօր եւս սարկաւագներ ունինք, որոնք կը ծառայեն Եկեղեցւոյ ու ժողովուրդին:

Աստուածաշունչ – Գործք Առաքելոց 6.1-15:

Ուկեայ Դամար – Ստեփանոս Աստուածոյ շնորհքով եւ զօրութեամբ լեցուն մարդ մըն էր, որ ժողովուրդին մէջ մեծամեծ հրաշքներ կը կատարէր եւ նշաններ ցոյց կու տար (Գործք Առաքելոց 6.8):

Ընկալումներ – Աշակերտները պէտք է կարենան.–

1. Գիտնալ, թէ առաքեալներուն նման մենք ալ կրնանք գտնուիլ այնպիսի կացութեամց մէջ, երբ ուրիշներու օժանդակութեան կարիքը կ'ունենանք:
2. Նկարագրել սարկաւագներուն կատարած գործերն ոնանք:
3. ճանչնալ Ստեփանոսն ու Փիրեն որպէս առաջին շրջանի Եկեղեցւոյ սարկաւագներ, եւ իրաքանչիւրին մասին երկու դէպք պատմել:
4. Քանի մը կերպեր ըսել, որոնցմով մենք եւս կրնանք սարկաւագներուն օրինակով ծառայել մեր նմաններուն:

Զեւատրում –

- Բացման աղօթք եւ Գիտէի՞ր (15 վայրկեան):
- Աստուածաշնչական պատմութիւն, Մտածենք պատմութեան մասին (20 վայրկեան):
- Սուրբ Փիրեն Սարկաւագուիին (10 վայրկեան):
- Դարցագրոյց՝ սարկաւագի մը հետ (10 վայրկեան):
- Փակման աղօթք (5 վայրկեան):

Դարկ Եղած առարկաներ –

Սուրբ Փիրեն Սարկաւագուիին բաժնին համար՝ փակցնելիք թուղթ, գունաւոր ներկեր, թուղթի կտորներ իրաքանչիւրին երկու հատ նուազագոյնը 24x6 սմ. չափով: Մեծ թուղթ մը, որուն վրայ դրուին իրենց թղթիկները, եւ պատի թերթ կազմել կարելի ըլլայ:

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՉԻՒՆ ՀԱՄԱՐ

Աստուածաշնչական Ենթահողը

Գործք Առաքելոցի 6-րդ գլխուն առաջին 15 համարները մեզի ցոյց կու տան, թէ ինչպէս նորակազմ Եկեղեցին ընկերային դժուարութիւններու դիմաց գտնը-ւեցաւ: Առաջին դժուարութիւնը այն էր, որ հսկայ աշխատանք կար կատարելիք: Առաջին հերթին Աւետարանը պէտք է քարոզուիր, բայց միեւնոյն ժամանակ կարիքաւորներուն ու անօթիներուն հոգ պէտք էր տանիլ:

Առաջին շրջանի քրիստոնեաներուն միշտ անհամաձայնութիւններ ալ կային: Մենք կը տեսնենք, որ

այրիները անտեսուած էին: Ուստի առաքեալները դիմեցին Եկեղեցիի օգնութեան, որպէսզի կերակուր եւ խնամք մատակարարեն անոնց, եւ իրենք ամբողջութեամբ նուիրուին քարոզութեան: Ահա այդպէս առաջին եօթը սարկաւագները ընտրուեցան, որոնց գլխաւորն էր Ստեփանոս:

Հակառակ անոր որ Ստեփանոս «շնորհրով ու զօրութեամբ լեցուն» մարդ մըն էր, որ «մեծամեծ հրաշքներ եւ նշաններ կը կատարէր ժողովուրդին մէջ», կային նաեւ այնպիսիներ, որոնք նախանձով լեցուած էին, եւ կամ կը վախնային որ Մովսիսական Օրենքին մէջ փոփոխութիւն յառաջանայ, ինչպէս կը նկարագրը լի 13-14 համարներուն մէջ:

Աշակերտներուն համար

Մեր աշակերտները կը հասկնան, թէ փոփոխութիւնը վախ կը յառաջացնէ երբեմն, հետեւաքար Ստեփանոսի պատմութիւնը կարեւոր է իրենց համար: Անոնք տակալին փոքր են եւ օգնութեան կարօտ, ուստի հարազատ է իրենց համար առաքեալներուն օգնականներու կարիք ունենալը:

Մեր աշակերտները պիտի քաջալերուին իմանալով, որ առաքեալները փոփոխութիւն յառաջացուցին եւ ընդդիմութեան հանդիպեցան: Եւ մեր աշակերտներուն նման, անոնք ալ օգնութեան կարիք զգացին:

Դասի աւարտին յիշեցուցէք աշակերտներուն, որ ծառայութիւնը սարկաւագներուն առաքելութեան իմանական երեսը կը ներկայացնէ Եկեղեցւոյ կեանքին մէջ, եւ ոչ միայն անոնք ծառայած են անցեալին, այլ նաև նահատակուած են անոր համար:

Դասը ցոյց կու տայ որ կիներ եւս սարկաւագութիւն կատարած են, ինչպէս Փիրէ: Կին սարկաւագները ընդհանրապէս ծառայած են կիներուն եւ ընտանիքներու մէջ, եւ այս մեզի կը յիշեցնէ թէ ինչքա՞ն ծառայութիւն ու աշխատանք կատարուած է առաջին շրջանի Եկեղեցւոյ կեանքէն ներս:

Դասը նաև առիթ կու տայ աշակերտներուն մտածելու սարկաւագներուն կատարած տարրեր աշխատանքներուն մասին, որ մինչեւ այսօր կը շարունակուի, օրինակը առնելով առաջին սարկաւագներէն:

ԴԱՍԱՐԱՆԴՄԱՆ ԿԱՐԳԸ

Բաժանա առօթք

«Յոզի Աստուծոյ, Աստուած ծշմարիտ, որ Յորդանան գետին վրայ եւ Վերնատունը իջար, եւ զիս լուսաւորեցիր սուրբ աւազանին մկրտութեամբ. մեղանչեցի երկինքին դէմ՝ քու առջենդ. Վերստին մաքրէ զիս քու աստուածային կրակով, ինչպէս իրեղն լեզուներով մաքրեցիր սուրբ առաքեալները. եւ որորմէ՝ քու արարածներուդ եւ ինձի՝ բազմամեղիս, Ամէն»:

Գրտե՛ր...

Նայեցէք երիտասարդ ընտանիքի բացատրութեան բաժնին եւ աշակերտներուն հարցուցէք թէ ի՞նչ կը տեսնեն: Ապա ըսէք. «Այս երիտասարդ զոյգի կեանքին մէջ ի՞նչ փոփոխութիւն տեղի ունեցած է», «Իրենց այս տարիքին անոնք ի՞նչ բանի կարիք ունին»: Ընդունեցէք առաջարկուած պատասխանները, ապա կարդացէք բացատրութեան կողքին գտնուող հատուածը: Աշակերտներուն հարցուցէք իրենց կողմէ կատարուող աշխատանքներու մասին, նաև օգնականներու միջո-

ցաւ իրենց կատարած գործերուն մասին: Շեշտը դրէք այն Երեւոյթին վրայ, որ մենք ալ երբեմն օգնութեան կարիք կ'ունենանք, երբ փոփոխութիւններ յառաջանան մեր կեանքին մէջ, կամ մասնաւոր կացութեանց դիմաց գտնուիմք:

Աշակերտները երեքական հոգինոց խումբերու բաժնեցէք, որպէսզի Ամէն մարդ օգնականի պէտք ունի պարտականութիւնը կատարեն, եւ եթէ կարելի ըլլայ, ամէնքն ալ ներկայացնեն իրենց պատասխանները ամբողջ դասարանին:

Աստուածաշական ուստութիւն

Միասնաբար կարդացէք Աստուածաշնչական պատմութիւնը: Կարդալու պահուն կրնաք հարցումներ հարցնել անոնց, որպէսզի մասնակից դառնան:

1. Առաքեալները նախանձախնդի՞ր կերպով կ'աշխատէին թէ ոչ, երբ հաւատացեալներէն խնդրեցին որ օգնականներ տան իրենց իբրեւ սարկաւագներ, որպէսզի կերակուրի մատակարարումով գրադին անոնք:
2. Ինչպիսի՞ մարդիկ ընտրեցին անոնք այս աշխատանքին համար: Ամէնքն ալ յարմա՞ր էին այս գործին, թէ մասնաւոր մարդիկ պէտք է ընտրուիին:
3. Ինչո՞ւ Ստեփանոսի հակառակորդները չկըրցան պատասխանել անոր ըսածներուն:

Հոգեւոր բառարան

Յունախոսներ՝ հրեական ծագումով քրիստոնեաներ, որոնք յունարեն կը խօսէին:

Եբրայեցիներ՝ հրեական ծագումով քրիստոնեաներ, որոնք արամերեն կը խօսէին:

Պայիոյանք՝ անարգական խօսքեր՝ Աստուծոյ ուղղուած:

Ոսկեազ Հսմար

Գործք Առաքելոց 6.8: «Ստեփանոս Աստուծոյ շնորհով եւ զօրութեամբ լեցուն մարդ մըն էր, որ ժողովուրդին մէջ մէծամեծ հրաշքներ կը կատարէր եւ նշաններ ցոյց կու տար»:

Գոյն սորվեցուցէք այս Ոսկեայ Քամարը, եւ կամ զայն օգտագործեցէք փակնան աղօթքի ընթացքին:

Ուստութեան Վերաբառու

Մտածե՞նք պատմութեան մասին բաժնի հարցումին պատասխանը, ինչպէս ըսինք, այն է՝ թէ առաքեալ-

ները պէտք է աւելի ազատ ըլլային ու ժամանակը տրամադրելին Աւետարանի քարոզութեան: Աշակերտները կրնան իրենց սեփական պատասխանը ունենալ երկրորդ հարցումին համար: Զանացէք շեշտել, թէ Ստեփանոսի դէմքը նոյնիսկ ցոյց կու տար, թէ ինք աստուածային շնորհը ունեցող մէկն էր: Սակայն բազմութիւնը այդ օր շատ զայրացած էր, եւ ծիգ կատարուած էր պաշտպանելու զինք: Քրիստոնեաները յաճախ նման կացութեանց դիմաց կը գտնուէին, եւ միշտ ալ քաջ կեցուածք կը ցուցաբերէին:

ԿԵՍԱՐ՝ ԵԿԵՂԵՑԻՑ ՄԵԶ

ՍՈՒՐԲ ՓԻՐԵ ՍԱՐԿԱՒԱԳՈՒԽԻՆ

Աշակերտները իրենց պատասխանները թող տան այս բաժնին: Պողոս առաքեալի ըսածներէն որեւէ մէկը Փիրէի մասին, ընդունելի է: Կին սարկաւագները յաճախ կոչուած են «սարկաւագուիհի», եւ երեմն ալ պարզապես «սարկաւագ»:

Նայեցէք նկարին, եւ ուշադրութիւն դարձուցէք նազարաթին, որ Յոռմայեցիներուն տարած իր նամակն է: Ապա թղթիկները բաժնեցէք եւ Յոռմայեցիներու նամակն համարներ թող գրեն անոնց վրայ եւ զարդարեն զանոնք: Ապա մեծ թուղթին վրայ փակցու-

ցէք զանոնք, եւ պատէն կախեցէք: Կրնաք վերնագիր մը դնել՝ «ԱՍՈՆՔ ԵՏ ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԽՈՍՔԵՐԸ, ՈՐՈՆՔ ՓԻՐԵՆ ՏԱՐԱՒ ՀՈՂՄԱՅԵՑԻ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻՆ»:

Պատի թերթը օգտագործեցէք իբրեւ վերաքաղի նիւթ, թէ ո՞վ էր Սուրբ Փիրէն:

ՀԱՐՁԱՉՐՈՅՅԻ ԱՎՐԿԱԽԳԻ ՄՐ ՀԵՏ

Առաջին պարբերութիւնը միասնաբար կարդացէք, եւ ապա դասարանը զոյցերու վերածեցէք: Իւրաքանչիւր զոյգ թող կարդա՛ հատուածը Տիմոթեոսի թուղթն, եւ ապա պատրաստ իր «հարցազոյց»ը:


Երբ ամէնքը պատրաստ ըլլան, կամաւոր զոյգ մը թող ներկայացնէ իր հարցազոյցը ամբողջ դասարանին:

ՀԱՏԱՄԻՔԻՆ ԱՆԴԱՄԱՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Քաջալերեցէք աշակերտները, որ պարտականութիւնները տան մէջ ամբողջացնեն:

ՓԱԿՄԱՆ ԱԴՈՐԵ

Դասապահը եզրափակեցէք Տէրունական Աղօքը:



Դաս 7 – ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ՝ ԱՌԱՋԻՆ ՆԱՐԱՏԱԿԸ

Քնարքան – Աստուծոյ վրայ ունեցած Ստեփանոսի հաւատքը առաջնորդեց զինք ընդունելու մարտիրոսութիւնը, իբրեւ ծշմարիտ վկայ, եւ իր գօրութիւնը ներշնչեց շատեր:

Աստուածաշունչ – Գործք Առաքելոց 7.1 – 8.1

Ոսկեայ Համար – Մինչ անոնք կը քարկոծէին Ստեփանոսը, ան կ'աղօթէր ըսելով. «Տէր Յիսուս, ընդունէ հոգիս»: Ապա ծունկի եկաւ եւ բարձր ծայնով ըսաւ. «Ասիկա մեղք մի սեպեր իրենց» (Գործք Առաքելոց 7.59-60):

Ընկալումներ – Աշակերտները պետք է կարենան. –

1. ճանչնալ Սուրբ Ստեփանոսը՝ իբրեւ առաջին նահատակը Եկեղեցւոյ, ինչպէս նաև առաջին սարկաւագը:
2. Նկարագրել Սուրբ Ստեփանոսը՝ իբրեւ վկայ եւ վստահող Սուրբ Յոգիին:
3. Ներկայացնել կերպեր, որոնց միջոցաւ մենք եւս վկաներ կրնանք ըլլալ:

Զեւաւորում –

- Բացման աղօթք եւ Գիտէի՞ր (15 վայրկեան):
- Աստուածաշնչական պատմութիւն, Մտածենք պատմութեան մասին (15 վայրկեան):
- Քարտսի աշխատանք (10 վայրկեան):
- Առանձին դիմադրել (10 վայրկեան):
- Փակման աղօթք (5 վայրկեան):

Դարկ եղած առարկաներ –

Քարտսի աշխատանքին համար պետք ունիք գունաւոր ներկերու:

Առանձին դիմադրելու բաժնին համար պետք ունիք մեծ փափուկ գնդակ մը, զոր աշակերտները իրարու վրայ պիտի նետեն, առանց վիրաւորուելու:

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՉԻՒՆ ՀԱՄԱՐ

Աստուածաշնչական Ենթահողը

Սուրբ Ստեփանոս Սարկաւագի ծառայութիւնը, վկայութիւնը եւ նահատակութիւնը կրնայ օրինակ ըլլալ մեր փոքրիկներուն բազմաթիւ կերպերով: Առաջին, Ստեփանոս ցոյց կու տայ անոնց թէ առաջին շրջանի Եկեղեցին խորապես տպաւորուած էր այն առաքելութեամբ զոր կատարեց Յիսուս Քրիստոս: Այնքան մը, որ անոնք իրենց կեանքը տուին հաւատքի ճնշարտութիւնը հաստատելու համար, ինչպէս ըրաւ Սուրբ Ստեփանոս: Այնպէս ինչպէս Աստուածաշնչական պատմութիւնը ցոյց կու տայ, անոնք լաւապէս գիտէին Յիս Կտակարանը, եւ այդ պատճառաւ ճանչցան Յիսուս Քրիստոսը իբրեւ Մեսիա, որ իր խոստումը յարգեց եւ ամբողջացուց մարգարեւութիւնները, ինչպէս Ստեփանոս իրենց համար վերաքաղը կատարեց ամբոց պատմութեան:

Մեր Եկեղեցւոյ աղօթքներն ու շարականները լեցուն են Յիս Կտակարաննեան պատկերներով, որոնք մեզի կը յիշեցնեն, թէ ինչքան կարեւոր է այդ հիմքը մեր հաւատքին համար: Չենք կրնար անտեսել այդ հիմքը, որովհետեւ ան ցոյց կու տայ մեզի թէ ինչպէ՞ս կը նախապատրաստուի Քրիստոսի գալուստը:

Աշակերտներուն համար

Դասը մեզի ցոյց կու տայ երեք մարդոց օրինակներ, որոնք մերժուեցան՝ Ստեփանոս, Մովսէս (ինչպէս Ստեփանոս կը պատմէ իր ունկնդիրներուն), եւ Մարիան՝ **Գիտէի՞ր...** բաժնի պատմութեան մէջ ներկայացուած աղջնակը: Այս դասին գլխաւոր կետերէն մէկը այս է, որ աշակերտները մտածեն ի՞նչ ընել երբ մերժուին, կամ ինչպէ՞ս վարուին անոնց հետ որոնք զիրենք չեն քաջալերեր, երբ իրենք կը պայքարին իրենց տեսա-

կետներուն համար: Փոքրիկն Մարիան պիտի որոշէր թէ ի՞նչ պիտի ընէ, երբ իր ընկերները մերժին նոր անձը: Սուրբ Ստեփանոս պէտք է որոշէր ի՞նչ ընել երբ զինք սպաննելու թշնամական կեցուածքի հանդիպեցաւ:

Սեր աշակերտներն այլ կրնան Յիսուս Քրիստոս պաշտպանութիւն խնդրել եւ օրութիւն ստանալ, ինչպէս ըրաւ Սուրբ Ստեփանոս: Քրիստոս եւ սուրբերը դժուարութիւններու հանդիպեցան ու չաշշարուեցան մեզմէ առաջ, եւ մեզի պիտի օգնեն, եթէ հետեւինք իրենց օրինակին:

ԴԱՍԱԽՆԱՄԱՆ ԿԱՐԳԸ

Բաժման սուօթք

«Յոզի Աստուծոյ, Աստուած ծշմարիտ, որ Յորդանան գետին վրայ եւ վերնատունը իջար, եւ զիս լուսաւորեցիր սուրբ աւազանին մկրտութեամբ. մեղանչեցի երկինքին դէմ՝ քու առջեւդ. Վերստին մաքր զիս քու աստուածային կրակովդ, ինչպէս հրեղէն լեզուներով մաքրեցիր սուրբ առաքեալները. եւ ողորմէ քու արարածներուդ եւ ինծի՝ բազմամեղիս, Ամէն»:

Գրտէր՝...

Մարիային եւ նոր աղջկան պատմութիւնը բոլոր միասին կարդացէք: Երբ աւարտէք, աշակերտները իրենց պատասխանները տան հարցումներուն, որ պատմութեան մասին դրուած են այնտեղ:

Աստուածաշնուրական Պատմութեան

Միասնաբար կարդացէք Աստուածաշնչական պատմութիւնը: Կարդացած ժամանակ հարցուցէք. «Ինչո՞ւ արդեօք Ստեփանոս պատասխանեց քահանայապետին, այնքան երկար պատմական վերաքաղ մը ընելով Խրայէլի պատմութեան մասին»: Ապա հարցուցէք. «Ո՞ր մէկ նախադասութիւնը մեզի կ'ըստ թէ Ստեփանոս մտածեց, թէ իր ունկնդիրները յանառ են»: Պատմութեան աւարտին հարցուցէք. «Ուրիշ ո՞վ ըսած է Ստեփանոսի այն խօսքերը, որոնք Աստուծոյ ներողամբութիւնը կը խնդրեն»: (Այդ բառերը գրեթէ նման են Յիսուսի այն խօսքերուն, որոնք մեր Տէրը ըսաւ խաչին վրայ մահացած պահուն): Երբ իրենց պատասխանները մտիկ ընեք, եւ շատ հաւանաբար ըսեն թէ ասոնք Յիսուսի խօսքերն են, հարցուցէք անոնց. «Ասիկա ամէնէն յստակ փաստերէն մէկն է, որ Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին է, որ իր կեանքը տուաւ մեր յալիտենական փրկութեան համար»:

Հոգեւոր բառարան

Վկայութեամ խորամ՝ խրայէլացիներու շարժական պաշտամունքի վայրը, զոր իրենց հետ կրեցին անապատական թափառումներու ժամանակ:

12 Զահապետներ՝ Յակոբի տասներկու զաւակները, որոնք խրայէլի տասներկու ցեղախումբերու պետերն էին:

Ոսկեաչ Հսման

Գործք Առաքելոց 7.59-60: «Մինչ անոնք կը քարկոտին Ստեփանոսը, ան կ'աղօթէր ըսելով. "Տէր Յիսուս, ընդունէ՛ հոգիս": Ապա ծունկի եկաւ եւ քարձը ծայնով ըսաւ. "Ասիկա մեղք մի սեպեր իրենց":»

Գոյն սորվեցուցէք այս Ոսկեայ Յամարը, եւ կամ զայն օգտագործեցէք փակնան աղօթի ընթացքին:

Պատմութեան Վերաբառող

Աշակերտները թող ամբողջացնեն **Մտածենք պատմութեան մասին** հատուածը, եւ ըսէք իրենց թէ բոլոր պատասխանները կրնան գտնել Աստուածաշնչական պատմութեան մէջ: Երբ ամբողջացնեն, պատասխանները Վերատեսութեան ենթարկեցէք: ճիշդը հետեւեալն է.՝

1/η, 2/ա, 3/Ե, 4/զ, 5/ը

Կեսար՝ Ենոդեմոց յէզ

Քարտէսի աշխատանք

Աշակերտներուն ուղղութիւն տուէք, որպեսզի կատարեն այս բաժնի աշխատանքը:

Առաջարկ որոշողութեան

Կարդացէք եւ քննարկեցէք, ապա դասարանը բաժնեցէք երեք կամ չորս հոգինոց խումբերու: Խումբի հրաքանչիւր անդամ թող կացութեան մը մասին գրէ, ուր ինք վկայած է իր հաւատքին մասին: Անոնց ըսէք, որ կացութեան մը մասին գրեն միայն, առանց ըսելու թէ ինչպէս պէտք է վկայեն մեր հաւատքին մասին նըման կացութեան մէջ: Իսկ միևս խումբը կրնայ պատասխանը գրել:

Աշակերտները թող խմբուին բոլորը մէկտեղ, շըրջանակածեւ: Յաւաքեցէք թուղթերը, խառնեցէք իրար, եւ ապա հրաքանչիւր աշակերտ հերթաբար թող կարդայ այդ կացութիւններէն մէկը: Գնդակը նետեցէք աշա-

կերտի մը վրայ եւ անիկա թող առաջարկէ թէ ինչպէ՞ս մէկը կրնայ վկայել տուեալ այդ կացութեան պարագային: Աշակերտը ապա գնդակը կը նետէ ուրիշի մը վրայ, որ նոյնը պիտի ընէ հերթաբար: Կրկնեցէք այս մինչեւ որ բոլորին ալ կարգ գայ:

Սուրբ Ստեփանոսի նուիրուած տաղը երգեցէք միասնաբար, որպեսզի իրենք ալ սորվին զայն: Հարցուցէք անոնց. «Ներումը մաս կը կազմէ՞ այն վկայութեան որուն մասին խօսեցանք: Ինչո՞ւ այս, եւ կամ ինչո՞ւ ոչ»: (Պատասխանը այս է, որովհետեւ մենք պէտք է ներենք, նոյնիսկ անոնց որոնք հակառակորդ են մեզի

կամ կը հալածեն մեզ, ինչպէս Սուրբ Ստեփանոս ըրաւ, եւ կամ ինչպէս մեր Տէրը ինք ըրաւ):

Ըստսահրեղ ստումներուն ՀԵՏ

Քաջալերեցէք աշակերտները, որ պարտականութիւնները տան մէջ ամբողջացնեն:

Փակման սուօթք

Դասապահը եզրափակեցէք Տէրունական Աղօքը քով:

